23. ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՍԱԿԵՐԵՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԱՄԱՆ ԾԸՏՈՒԹՅՈՒՆԸ

Գրաֆիկական եղանակով մակերեսների որոշման էությունը կայանում է նրանում, որ տեղամասը, որը պատկերված է հատակագծի վրա, նշահարվում և քանանվում է հատարակ երկրաչափական պատկերների, եռանկյունների կամ քառանկյունների: Որից հետո հիմքի և քարձրության միջոցով որոշված մակերեսները գումարվում են և ստացվում է ընդիհանուր մակերեսը: Ինչքան տեղամասի եզրագծային անկյունների քանակը շատ է լինում, այնքան զրանց մակերեսի հաշվարկը գրաֆիկական եղանակով անպատճակահարմար է լինում: Գրաֆիկական եղանակով որոշված ամեն մի եռանկյան կամ քառանկյան մակերեսը որոշվում է 2 անգամ, որոնց սխալի չափը չպետք է գերազանցի:

$$\Delta P_{\text{հա}} = 0,04 \cdot \frac{M}{10000} \cdot \sqrt{P} / \text{VI-16/}$$

որտեղ՝ M -ը մասշտաբի հայտարարն է:

Բ-ն տարածքը հա- ով:

Օրինակ $p=100, 1:10000$ մասշտաբի դեպքում

$$\Delta P_{\text{հա}} = 0,04 \cdot \frac{10000}{10000} \cdot \sqrt{100} = 0,4 \text{ հա}$$

Եթե հայտնի է բազմանկյան տեսք ունեցող հողամասի սահմանակետերի կոորդինատները /միևնույն է և գրաֆիկորեն որոշված/, ապա ԷՀՄ -ի միջոցով ավելի նպատակահարմար է հաշվել մակերեսը կոորդինատներով, որն ունի համեմատաբար բարձր ճշտություն: Գոյություն ունեն այնպիսի սարքավորումներ, որոնք ավտոմատ ձևով որոշում են գրաֆիկական կոորդինատները և գրանցում դրանք, այսպես կոչված, պերֆոլենտի կամ պերֆոլիարտի վրա, որը փախանցվում է ԷՀՄ -ին, վերջինս էլ բառ (IV-1) բանաձևի որոշում է մակերեսը:

Բնչական տեսնում ենք՝ մակերեսների հաշվարկումը կոորդինատների միջոցով, որոնք սատացվել են գրաֆիկորեն, կոորդինատներով սխալը կկազմի գրաֆիկորեն վերցված զծի սխալի չափով՝ մոտավորապես $0,08\text{մմ}$: Դա $1:10000$ մասշտաբի հատակագծի վրա կլինի $0,8\text{մ}$: Քանի որ 1կմ-ի վրա այն կկազմի $\frac{0,8}{1000} \leq \frac{1}{1250}$, ապա

մակերեսի համար օգտվելով $m_p = \frac{P}{c} \cdot \sqrt{2}$ բանաձևից հաշվենք

$100 \text{ հա-ի համար ստացվող սխալի չափը } m_p = \frac{100}{1250} \sqrt{2} = 0,113 \text{ հա: Այս սխալը համեմատելով վերևում ստացված սխալի } 0,4 \text{ հա } \text{ հետ } 0,113 \leq 0,4 \text{ տեսնում ենք, որ գրաֆիկորեն որոշված կոորդինատների միջոցով } 4 \text{ անգամ ճշտությունը բարձրանում է, իսկ եթե հաշվի առնենք, որ հատակագծերը կարող են լինել ավելի խոշոր մասշտաբի, որեմն բերված օրինակը հաստատում է, որ որևէ համայնքի կամ$

տնտեսության տարածքի մակերեսը հատակագծի վրա հաշվելի ճշտության բարձրացման համար պետք է օգտվել կոորդինատներից:

Գործնականում արդի պայմաններում պահանջվում է, որ հողամասերի հատկապես տնտեսության կամ ստանձին անհատ հաղօգտագործողի/ մակերեսը, որն ունի բառանկյան տեսք՝ որոշել բարձր ճշտությունով:

Այս բանին հասնելու համար, ինչպես տեսանք, մակերեսի ճշտությունը կախված է ($P = a \cdot b$) բանաձևից, և ե-ի չափման ճշտությունից, ուստի այն դիմերենցեմք և անցնենք միջքառակուսային սխալին՝

$$m_p^2 = \left(\frac{\partial P}{\partial a} \right)^2 \cdot m_a^2 + \left(\frac{\partial P}{\partial b} \right)^2 \cdot m_b^2$$

Բանի որ $\frac{\partial P}{\partial a} = b$ և $\frac{\partial P}{\partial b} = a$, ընդունենք որ $m_a = m_b = m_{ab}$ ապա՝

$$m_p = \pm m_{ab} \sqrt{b^2 + a^2}$$

Այս բանաձևի մեջ m_{ab} -ն չափման սխալն է, որը ժապավենով չափելիս հավասար է $1/2000=0,0005$:

Օրինակ՝ տնամերձ հողամասի չափերն են $a=30\text{մ}$, $b=20\text{մ}$ ժապավենով չափված գծերին համապատասխան մակերեսի սխալը կլինի. $m_p = 0,0005 \sqrt{30^2 + 20^2} = 0,02 \text{ մ}^2$

Գրաֆիկական կոորդինատների միջոցով որոշված գծերի սխալն է՝

$$m_{ab} = \frac{1}{1250} = 0,0008, \quad m_p = 0,0008 \sqrt{30^2 + 20^2} = 0,03 \text{ մ}^2$$

Հողամասերի մակերեսներն արդի պայմաններում պահանջվում է հաշվել էլեկտրոտախեոմետրերով, որի գծային չափման հարաբերական սխալն է $1/330000=0,000003$ ուստի նույն տեղամասը կորոշվի

$$m_p = 0,000003 \sqrt{30^2 + 20^2} = 0,00011 \text{ մ}^2 \text{ սխալով:}$$

Ահա սա բավական մեծ ճշտություն է, և էլեկարոտախեռնետրով մակերեսները որոշելու գործողությունը ժամանակի հրամայական պահանջն է:

Գրաֆիկական եղանակով մակերեսների հաշվարկման էությունը կայանում է հետևյալում. ամբողջ տեղամասը, որը պատկերված է հատակագծում, բաժանվում է պարզ երկրաչափական պատկերների, առավելապես՝ եռանկյունների, հազվադեպ նաև սեղանների: Յուրաքանչյուր պատկերի հիմքը և բարձրությունը չափվում է հատակագծի վրա գյաֆիկորեն, որոնցով հաշվարկվում է պատկերի մակերեսը: Բայոր պատկերների մակերեսների գումարը տալիս է ընդհանուր տեղամասի մակերեսը: (գծ. 21^ա)

Տեղամասի սահմանագիծն ինչքան շատ ծովոված լինի, կամ շատ անկյուններ ունենա, այնքան գրաֆիկական եղանակով մակերեսի որոշման ճշտությունը ցածր կլինի և անարդյունավետ, ուստի այդ եղանակով մակերեսի որոշումը կլինի աննպատակահարմար:

Ամենալավ արդյունքն այս եղանակի ժամանակ լինում է այն դեպքում, եթե եռանկյունները կամ սեղանները լինում են հավասարակող, կամ դրան մոտիկ պատկերներ:

Եթե պատկերի հիմքը կամ բարձրությունն իրենից ներկայացնում է այնպիսի գիծ, որը հանդիսանում է թեոդոլիտային ընթացքի կողմ, կամ սահմանագիծ, որի երկարությունը չափված է բնության մեջ, ապա հաշվարկման ժամանակ այդ չափված կողմի տվյալն ընդունվում է որպես հաշվարկային մեծություն, որով բարձրանում է մակերեսի որոշման ճշտությունը: Ստուգման և ճշտության բարձրացման համար յուրաքանչյուր եռանկյան մակերեսը որոշվում է կրկնակի: Ամեն անգամ ընդունելով տվյալ պատկերի հիմքի և բարձրության տարրեր կողմեր: Եթե կրկնակի չափումներով որոշված մակերեսները միմյանցից տարբերվում են թույլատրելիի սահմաններում, ապա պատկերի մակերեսը ընդունվում է երկու չափումների միջին մեծությունը (տես աղյուսակ 4^ա):

Եռանկյունների հիմքերը և բարձրությունները չափման համար ընտրելիս, պետք է ճշտել նրան, որ հարեան եռանկյունների դեպքում նույն կողմների երկարությունները չկրկնվեն, որով բարձրանում է մակերեսների որոշման ճշտությունը, միաժամանակ զերծ ենք մնում կոպիտ սխալներ թույլ տալուց:


Եթե տեղամասի սահմանակետերի կոորդինատները հայտնի են (թեկուզ գաֆիլորեն որոշված), ապա անալիտիկ եղանակով ԷՀՄ-ի միջոցով պետք է կատարել մակերեսի որոշումը, օգտվելով (IV-1) բանաձևից: Ներկա ժամանակում գոյություն ունեն հատուկ պերֆորմապավեններ կամ պերֆորատեր, որոնց վրա լուսամեխանիկական եղանակով գրանցվում են սահմանակետերի կոորդինատներ, որից հետո ալգորիթմների միջոցով նույն (IV-1) բանաձևից ԷՀՄ-ով որոշվում է տեղամասի մակերեսը:

աղյուսակ 4^ա

Δ-ների և գագաթների համարները	չափման համարը	Հիմքը	բարձրությունները	կրկնակի մակերեսներ 2P հա	կրկնակի մակերեսների միջինը
1 1 - 2 - 7	I	462,7	580	26,84	26,85
	II	728,8	369	26,89	
2 2 - 5 - 7	I	458	657	30,09	30,14
	II	674	448	30,20	
3 2 - 4 - 5	I	284,3	566	16,09	16,07
	II	571,0	281	16,05	
4 2 - 3 - 4	I	386,4	280	10,82	10,86
	II	301,6	361	10,89	
5 5 - 6 - 7	I	276,1	390	10,77	10,78
	II	391,9	275	10,78	

$$2p = 189,4 \quad 2p = 94,7$$

$$\text{Ընդ.} \quad P = 47,35 \text{հա}$$



Գօ. 21ա

24. ՍԱԿԵՐԵՄՆԵՐԻ ՀԱՇՎԱԾՆ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԵՂԱՍԱԿԲ /ՊԼԱՆԻՍԵՏՐ/

Կորագիծ եզրագծով պատկերների մակերեսները մեխանիկական եղանակով որոշելու հարցը շատ վաղուց է գրադեցրել գիտնականների ուշադրությունը, սակայն 1854թ. շվեյցարացի ալբոֆեառ Ամպերին հաջողվեց ստեղծել բևեռային պլանիմետրը, որը հնարավորություն է տալիս արագ և բավարար հշտությամբ որոշելու ցանկացած կորագիծ՝ եզրերով սահմանափակված պատկերի մակերեսը հատակագծի կամ քարտեզի վրա:

Պլանիմետրի ընդհանուր անսքը տես թիվ 24 գծագիրը: Պլանիմետրը բաղկացած է. R₁ բևեռային լծակից իր (4) ծամրոցով և (9) ասեղով՝ բղիքի վրա ամրացնելու համար: Վերջին արտադրության բևեռային պլանիմետրերի մուտ ասեղիկ չկա, բայց դրա փոխարեն ավելացված է ծամրոցի քաշը ու բղիքի վրա դրա կայունությունը:

R₂ շրջատար լծակից իր (3) հաշվիչ մեխանիզմով և շրջատար լծակի ծայրում՝ (5) բռնակից, (6) գամային եննարանից և (7) շրջանցող սայրից, որը վերջին արտադրության պլանիմետրերում փոխարինված է օպտիկական կենտրոնով շրջանցող սայրով: Երկու լծակները միմյանց միանում են անգլիսիկ գամով (8), որը միաժամանակ կոչվում է նաև գամփող բևեռ:

Պլանիմետրի հաշվիչ մեխանիզմի կառուցվածքը տես թիվ 25 գծագրի վրա:

Ըստ գծագրի շրջատար լծակի երկարությունը R₂=173,3մ:

Թվատախտակի և հաշվիչ անիվի վրա հաշվեցոյցն է U=3684:

Հաշվիչ մեխանիզմը բաղկացած է հորիզոնական թվատախտակից (1), հաշվիչ անիվից (2), հաշվիչ անիվի վեռներից (3):

Հաշվիչ անիվի և վեռների միջանցիկ արանքը կարգավորող պտուտակներից (4):

Հաշվիչ անիվի և շրջատար լծակի առանցքների գուգահեռության պայմանը կարգավորող (5,6) պտուտակներից:

Հաշվիչ անիվը բաժանված է 100 մասի՝ յուրաքանչյուր 10-ը նշանակված է 0,1,2,3...9 մակագրություններով, իսկ վեռները ունի 10 բաժանում: Այսպիսով. վեռների օգնությամբ կարելի է գնահատել հաշվիչ անիվի շրջագծի երկարության մեկ հազարերրորդական մասը: (1) թվահարթակը բաժանված է 10 մասի: Հաշվիչ անիվի առանցքի պտուտումը որդնյակային և ատամանիվային շարժման միջոցով փոխանցվում է թվահարթակի պտուտան առանցքին, ընդ որում՝ փոխանցման մեխանիզմն այնպես է հաշված, որ հաշվիչ անիվի 10 պտույտին համապատասխանում է հորիզոնական թվահարթակի մեկ լրիվ պտույտ: Թվահարթակի և հաշվիչ անիվի վեռների վրա

ցուցմունքը կարդացվում և գրանցվում է բառանիշ՝ թվով /այդ ցուցմունքը կարող է լինել 0000-10000/: Որևէ պատկերի մակերեսը հաշվելու համար, պատկերի եզրագծի վրա նախընտրում են սկզբնակետ և պլանիմետրի շրջանցիկ սայրը համընկեցնելով սկզբնական կետին՝ կարդացվում է առաջին ցուցմունք՝ U_1 , որից հետո շրջատար սայրով հավասարաչափ շարժումով շրջանցելով պատկերի արտաքին սահմանագծով, շրջանցումն ավարտվում է նույն սկզբնական կետի վրա և կարդացվում է երկրորդ ցուցմունք՝ U_2 : Ընդ որում, նրեւ շրջանցումը կատարվել է ժամ սլաքի ուղղությամբ, ապա ցուցմունքները շարժման ընթացքում աճում են, ուստի որոշելի պատկերի մակերեսին համապատասխանող թիվը՝ $\Delta U_1 = U_2 - U_1$, իսկ եթե շրջանցումը կատարվում է ժամ սլաքի հակառակ ուղղությամբ, ապա որոշելի մակերեսին համապատասխանող թիվը՝ $\Delta U_2 = U_1 - U_2$:

Ստուգման նպատակով միշտ շրջանցումը կատարվում է երկու և ավելի անգամ և վերցվում է դրանց միջինը՝

$$\Delta U = \frac{\Delta U_1 + \Delta U_2}{2}. \quad (\text{IV-17})$$

Որպեսզի պատկերի մակերեսն արտահայտենք m^2 կամ հա-ով, ապա պեսքը է իմանանք նաև այլանիմետրի մեկ բաժանման համապատասխանող արժեքը C -ն m^2 -ով կամ հա-ով, որից հետո, բազմապատկելով ստացված թվով՝ որոշում ենք մակերեսը.

$$P = \Delta U \cdot C \quad (\text{IV-18})$$


Պլանիմետրի (C) բաժանման արժեքը որոշվում է փորձով: Դրա համար վերցվում է այնպիսի երկրաչափական պատկեր, որի մակերեսը տեսականորեն հայտնի է, օրինակ կոռորդինատային ցանցի 1m^2 -ն՝ $=100\text{m}^2=100\text{հա}$ -ի $1:10000$ -ի դեպքում, կամ շրջանագիծ, որի շառավիղն է $r=5,6433\text{m}$ ($S = \pi r^2 = 3,141 \cdot 5,6433^2 = 100 \text{ m}^2 = 100\text{հա}$), նույն մասշտարի դեպքում: Վերջին արտադրության բնեուային

պլանիմետրի հետ դրվում է ստուգի քանոն՝ Ը որոշելու համար: Այդ ստուգի քանոնը պատրաստված է լաւում և համածովածքից և ունի մի ծայրում ասեղիկ՝ թղթին ամրացնելու համար, որը դառնում է շրջանագծի կենտրոն, իսկ մյուս ծայրում կա ինդեքս գծիկ և փոքրիկ անցք գծիկ վրա, որի մեջ հազցվում է պլանիմետրի շրջանցիկ սայրը: Այսպիսով պլանիմետրի սայրը մեկ լրիվ պտույտի դեպքում գծում է 100 m^2 -ին համապատասխանող շրջանագիծ: Հետագայում կտևանենք, որ նման եղանակով C -ի որոշումը ունենում է ավելի բարձր ճշտություն, քան բառակուսու միջոցով:

C -ն որոշելու համար օգտվում ենք հետևյալ բանաձևից՝

$$C = \frac{P_{\text{հայտ.}}}{\Delta U} \quad (\text{IV-19})$$

հայտնի մակ. (IV-19) որտեղ $P_{\text{հայտ.}}$ առկ լիմ² կամ շրջանագիծ, որի $S=100 \text{ m}^2$ տեսականորեն հայտնի մակերեսն է հեկտարներով արտահայտված: ΔU -ն այդ պատկերի պարագծով շրջանցած բաժանումների թիվն է, որն անհրաժեշտ է որոշել երկու անգամ՝ պլանիմետրի շարժական բևեռի երկու դրությամբ՝ $1/$ բևեռ աջ և $2/$ բևեռ ձախ: Տես գծագիր 22-ը.



Գծ. 22

Աշխատանքի արդյունքները գրառվում են թիվ 5 աշխատակում, իսկ աղյուսակի վերևում գրառվում է պլանիմետրի N-ը /որը նշված է թիվում հաշվիչ մեխանիզմի կամ շրջատար լծակի վրա/ նշվում է նաև մասշտաբը և լծակի R նրկարությունը:

Հասակագծի վրա պլանիմետրով մակերեսների որոշման
աղյուսակ.

պլանիմետր N 3613 U 1:10000, R=185,5

Աղյուսակ 5.

N n/k	հաշվիչ մեխանի զմի դրաբան նը	հաշվեցոյցներ		տարբերություն ներփակմանը $\Delta U_1, \Delta U_2$	երկու կյանքա զմերի միջինը ΔU	Ծանոթու թյուն		
		U_2, U_1	U_3, U_4					
I/ Պլանիմետրի բաժանմունքի արժեքի որոշումը								
1	թ. աջ	8154 (2)	8321 (3)	1032 (7)	1030 (15)			
		7123 (1)	7287 (4)					
		1031 (5)	1034 (6)					
2	թ. ձախ	10156 (9)	9845 (10)	1028 (14)				
		9127 (8)	8817 (11)					
		1029 (12)	1028 (13)					
2/ Տեղամասի մակերեսի որոշումը								
1	թ. աջ	2716 (2)	3225 (3)	2050 (7)	2046 (15)			
		0668 (1)	1172 (4)					
		2048 (5)	2053 (6)					
2	թ. ձախ	3400 (9)	3342 (10)	2042 (14)				
		1356 (8)	1302 (11)					
		2044 (12)	2040 (13)					

Պատկերի եզրագծի վրա բնտրելով սկզբնական կետը՝ շրջատար լուսի սայրը համընկեցնում ենք այդ կետին և կարդում սկզբնական U₁ հաշվեցույցը, շրջանցելով պատկերի եզրագծի վրայով ժամ պաքի ուղղությամբ՝ վերադառնում ենք նույն սկզբնակետին ու կարդացվում է U₂, հաշվեցույցը: Հաշվեցույցները U₁ և U₂ գրառվում են թիվ 5 աղյուսակի թիվ 3 սյունակում, որից հետո մասունք թերևակի շարժում ենք հաշվիչ անիվը և փոխվում է ցուցմունքը հաշվիչ անկոփի վրա: Դրանից հետո շարժական սայրը համատեղում ենք նույն սկզբնակետին հետ ու կարդում (U₃) հաշվեցույցը, որը գրառվում է 4-րդ սյունակում և այս անգամ պատկերի եզրագծով շրջանցելով ժամ պաքի մակար հակառակ ուղղությամբ, վերադառնում ենք նույն սկզբնակետին վրա ու բնրեցում (U₄) հաշվեցույցը, որը նոյնպես գրառվում է 4-րդ սյունակում:

Աղյուսակում բոլոր գրառումների և հաշվումների հերթականությունը նշված է փակագծերի մեջ:

Ցուցմունքների ստացվող տարբերությունները որոշվում են՝

$$\Delta u_1 = U_2 - U_1 = 1031$$

$$\Delta u_2 = U_3 - U_4 = 1034$$

Որոշվում է դրանց միջին մեծությունները՝

$$\Delta U = \frac{\Delta U_1 + \Delta U_2}{2} = 1032$$

Ստացված թիվն արտահայտում է պատկերի 100սմ²-ին համապատասխանող պլանիմետրի բաժանումների թիվը:

Տարբերությունները $\Delta U_1, \Delta U_2$, -ի միջև չպետք է գերազանցի՝

2 միավորը՝ մինչև 200 բաժանումին համապատասխանող մակերեսի դեպքում,

3 միավորը՝ մինչև 200-2000 բաժանումին համապատասխանող մակերեսի դեպքում,

4 միավորը՝ 2000-ից մեծ բաժանումին համապատասխանող մակերեսի դեպքում:

Թույլատրելի Δu_1 և Δu_2 -ի դեպքում հաշվարկվում է թերո աջ և թերո ձախ դիրքով երկու կիսանվագներով ստացվող ΔU :

Ստացված մեծությունը գրառվում է 6-րդ սյունակում (15):

Այսպիսով վերջանում է երկու կիսանվագով չափումը և C-ի որոշումը կատարվում (IV-19) բանաձևով:

$$C = \frac{P}{\Delta U} = \frac{100}{1030} = 0,0971 \text{ հա:}$$

25. ՏԵՂԱՄԱՍԻ ՍԱԿԵՐԵՍԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Տեղամասի մակերեսի որոշման կարգը պլանիմետրով նույնն է ինչ-որ պլանիմետրի մեկ բաժանման արժեքի (C)-ի որոշման դեպքում: Տեղամասի մակերեսի որոշումը և հաշվեցույցների գրառումը և դրանց հերթականությունը բերված է աղյուսակում /տես թիվ 5-ի 2 աղյուսակը/:

Տեղամասի որոնելի մակերեսին համապատասխանող պլանիմետրի բաժանումների թիվը որոշելուց հետո մակերեսը գտնում ենք հետևյալ ձևով:

$$P = C \cdot \Delta U = 0,0971 \cdot 2046 = 198,67 \text{ հա}$$

Տեղամասի մակերեսներն ավելի մատչելի ձևով հաշվելու համար եթե աշխատանքների ծավալը մեծ է/ ավելի նպատակահարմար է, որ C-ն լինի կյուր թիվ: Մեր օրինակի համար 1:10000 մասշտարի դեպքում ցանկալի է, որ C=0,1հա-ի:

C=0,1հա դարձնելու համար օգտվում ենք հետևյալ բանաձևից.

$$C = R \cdot \tau$$

Որտեղ R-ը շրջատար լծակի երկարությունն է, որի փոփոխումից փոխվում է նաև բաժանմունքի արժեքի մեծությունը:

τ -ն պլանիմետրի մեկ ամենափոքր բաժանմունքի չափն է և այն հավասար է հաշվի անիվ $\frac{1}{1000}$ -ին:

Նշված բանաձևի և τ -ի հաստատուն լինելու հատկության հիման

$$\text{փառ կարելի է գրել, որ: } \tau = \frac{C}{R} = \frac{C_1}{R_1} = \frac{C_2}{R_2} = \dots = \frac{C_n}{R_n}$$

$$\text{կամ } \frac{C}{R} = \frac{C_1}{R_1}, \text{ որտեղից: } R_1 = \frac{R \cdot C_1}{C}. \quad (\text{IV-20})$$

Այս բանաձևը թույլ է տալիս C_1 -ի ցանկացած արժեքի և առկա R-ի միջոցով որոշել R_i -ի որոնելի նոր արժեքը, մեր օրինակի համար:

$$R_1 = \frac{R}{C} \cdot C_1 = \frac{185,5}{0,0971} \cdot 0,1 = 191,0$$

Պլանիմետրի փառ նշված (8) վեռների միջոցով շարժական լծակը տեղաշարժում ենք այնպես, որ $R_1=191,0$ մմ-ի այդ դեպքում $C=0,1$ հա:

26. ԲԵՎԵՌԱՅԻՆ ՊԼԱՆԻՍԵՏՐԻ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ

Բնեուային պլանիմետրով աշխատելիս պլանիմետրից պահանջվում է հետևյալը:


1. Հաշվիչ անիվը պետք է ազատ և սահուն պտտվի իր առանցքի շուրջը, չճոճվի կամ չհպվի վեռներին, չխոչընթառի առանցքակալների ազատ շարժմանը: Ստուգման համար մատով շարժման մեջ ենք դնում հաշվիչ անիվին, որի հետևանքով անիվն իներցիայով շարժման մեջ պետք է գտնվի իր առանցքի շուրջը մոտ 3-4 վայրկյան տևողությամբ: Հաշվիչ անիվի և վեռների միջև պետք է լինի սովորական թրի հաստությամբ միջանցիկ տարածություն: Եթե այդ պահանջները կատարված չեն, ապա հաշվիչ անիվի այդ պայմանները կարգավորվում են գծագրի փառ նշված A և B պտուտակների օգնությամբ, որոնք ամրացված են C և D առանցքակալներով: Վերջիններն ել թուլացվում են E և F պտուտակներով: Կարգավորումից հետո ամրացվում է E և F պտուտակները:

2. Վեռների վերևի մակերեսը պետք է լինի պատվոյ անհիմի մակերեսի հետ միևնույն հարթության կամ միևնույն շոշափողի վրա: Վեռները կարգավորվում է իր վրա և հաշվի անիվի վրա գոտվող պոտուտսկմերի օգնությամբ:

3. Հաշվից անիվի վրայի բաժանումները և վեռների վրայի բաժանումները սխեմ է լինեն ճիշտ: Համընկեցնելով վեռների վերջին բաժանման գիծը գլանի վրայի բաժանման որևէ զծի հետ՝ հաջորդաբար հետևում ենք վեռների 0-ական բաժանման զծի համատեղումը գլանի վրայի 1-ից-10 բաժանման զծերի հետ: Եթե համապատասխանաբար ընթերցվում են ցուցմունքներ՝ կանոնավոր ձևով, ապա պայմանը բավարար է:

4. Պլանիմետրի հիմնական եքվրաչափական պայմանի ստուգումն է.

Պլանիմետրի հաշվից անվագուտու պոտուման առանցքը պետք է զուգահեռ լինի շրջատար լծակի առանցքին: Այսինքն՝ պահանջվում է, որ ϕ անկյունը հավասար լինի $0 - \phi$: Տես զծագիրը.



որպեսզի տահանաները համեմատական կապը պլանիմետրի բաժանումների թվի (U)-ը՝ շրջատար լծակի (R)-ի հետ գրեթե հայտնի բանաձեռքը, որուցով որպեսզի է շրջանցվող պատկերի մակերեսը.

$$\text{ա. } P = C \cdot U = R \cdot \tau \cdot U \quad (\text{IV-21})$$

Այդ նույն մակերեսը թերուի մյուս երկու դրույթներով նույնպես կստանանք

$$\text{բ. } P = C' \cdot U' = R \cdot \tau \cdot U'$$

$$\text{գ. } P = C'' \cdot U'' = R \cdot \tau \cdot U''$$

բանաձեռք C պլանիմետրի մեկ բաժանման գիծն է և

$$C = R \cdot \tau, \quad C' = R_1 \cdot \tau, \quad C'' = R_2 \cdot \tau \quad (\text{IV-22})$$

Որտեղ τ -ն անվիովոխ է, պլանիմետրի մեկ բաժանման չափն է, իսկ R -ը շրջատար լծակի երկարությունն է և փոփոխվում է:

τ -ն հաստատում չափ է տվյալ պլանի մեջքի համար և հավասար է հաշվից անվագուտու $\frac{1}{1000}$ -ին:

Բաժանելով /թ/ բանաձեր /ա/-ի վրա կստանանք պատկերի եզրագծով շրջանցելու հետևանքը տվյալ մակերեսին համապատասխանող բաժանումների թիվը՝ թե՛ռ աջի դեպքում:

$$\frac{P_1}{P} = \frac{R_1 \cdot \tau \cdot U'}{R \cdot \tau \cdot U}, \quad U' = \frac{P_1 \cdot R \cdot \tau \cdot U}{R_1 \cdot \tau \cdot P} = \frac{R}{R_1} \cdot U \quad /թ/ \quad \text{իսկ} \quad (\text{q})$$

բանաձեր բաժանելով (ա)-ի վրա՝ կստանանք թե՛ռ ծախի դեպքում բաժանումների թիվը. $U'' = \frac{R}{R_2} \cdot U$ (թ)

$$\frac{R}{R_1} \text{ և } \frac{R}{R_2} \quad \text{հարաբերություններն արտահայտենք } \phi \text{ և } \bullet$$

անկյունների միջոցով, օգտվելով Δ համար, սինուսների թերեմից կստանանք.

$$\frac{R}{R_1} = \frac{\sin\{180^\circ - (\varphi + \theta)\}}{\sin \theta} = \frac{\sin \theta \cdot \cos \varphi + \cos \theta \cdot \sin \varphi}{\sin \theta}$$

կոտորակի համարիչը և հայտարարը բաժանենք $\sin \theta$ -ի վրա

$$\frac{R}{R_1} = \cos \varphi + \sin \varphi \cdot \operatorname{ctg} \theta / q/$$

Եռանկյունի aba'' -ից

$$\begin{aligned} \frac{R}{R_{11}} &= \frac{\sin\{180^\circ - (180^\circ - \theta) - \varphi\}}{\sin \theta} = \frac{\sin(\theta - \varphi)}{\sin \theta} = \\ &= \frac{\sin \theta \cdot \cos \varphi - \cos \theta \cdot \sin \varphi}{\sin \theta} \end{aligned}$$

կոտորակի համարիչը և հայտարարը բաժանենք $\sin \theta$ -ի վրա կստանանք.

$$\frac{R}{R_{11}} = \cos \varphi - \sin \varphi \cdot \operatorname{ctg} \theta / t/$$

Ստացված $/q/$ և $/t/-ի$ արժեքները տեղադրենք $/q/-ի$ և $/t/-ի$ մեջ կստանանք.

$$\text{Աշխատանք 1: } U' = U(\cos \varphi + \sin \varphi \cdot \operatorname{ctg} \theta) /IV-23/$$

$$\text{Զախարիա Արքան: } U'' = U(\cos \varphi - \sin \varphi \cdot \operatorname{ctg} \theta) /IV-24/$$

Այժմ քեզու աջ և ձախ դրույթներով կարդացված ցուցմունքների տարբերությունը կլինի՝

$$\Delta = U' - U'' = 2U \operatorname{ctg} \theta \cdot \sin \varphi /IV-25/$$

$/IV-23/ + /IV-25/$ բանաձևերից կարելի է ամեն եզրակացություն. որ եթե պայմանը չի կատարված $\varphi \neq 0^\circ$ -ի, իսկ պլանիմետրի ստուգումը կատարվել է քեզու աջ և քեզու ձախ դրույթներ և լծակների կազմված $\theta = 90^\circ$ -ի, ապա բաժանումների թիվն երկու քեզուների դրույթներ էլ կլինի միմյանց հավասար.

$$U' = U'' = U \cdot \cos \varphi; \quad \Delta = 0$$

Ուսափ, պլանիմետրի ստուգումը լծակների կազմած այլպիսի անկյան դեպքում, եթե $\theta = 90^\circ$ -ի՝ իմաստ չունի, քանի որ պայմանի հայտնաբերման համար բավարար տվյալներ չկան: Դրա համար պլանիմետրի գլխավոր պայմանի ստուգման ժամանակ շրջանցելով պատկերը /ավելի լավ է շրջանցել ստուգի բանոնի միջոցով, քեզուների երկու դրույթներով, բայց լծակներով կազմված անկյունը լինի սուր/ միջին դրույթունից ոչ պակաս 30° -ից: Պլանիմետրի քեզուի մի դրույթունից՝ աջից մյուս դրույթունը՝ ձախից, փոփոխման ժամանակ պետք է անշարժ քեզուի ծանրոցը՝ (4) շարժել, այլ բողել նույն տեղում, որպեսզի լծակների միջև կազմված θ անկյունը չխախտվի: Եթե պլանիմետրի երկու դրույթունների արդյունքում բաժանումների թվերի տարբերությունը չի գերազանցում 3 բաժնեմասները, ապա պայմանը կատարված է: Հակառակ դեպքում պետք է հաշվի անիվի հարթությունը շրջել և այնտեղ գտնվող (N, Q) պտուտակների միջոցով շրջատար լծակի առանցքը շարժել հաշվի անիվի առանցքի նկատմամբ հետ կամ առաջնախօրոք բոլցանելով բոնող պտուտակ (S)-ը:

Ուղղումը կատարվում է մի քանի նվազով՝ օգտվելով ամրացուցիչ պտուտակի քայլերի հաշվարկից: Պտտելով (N) պտուտակը որոշակի դրույթամբ՝ կատարվում է պատճերի շրջանցում քեզուի երկու դրույթներով և եթե տարբերությունը մեծանում է, կճշանակի N-ի պտուտումը կատարվում է ոչ անհրաժեշտ ուղղությամբ: Ուստի պետք է N պտուտակը պտտել հակառակ և նույն քայլերի հաշվարկով կարգավորել առանցքների գուգահեռության պայմանը:

Պլանիմետրի ստուգումից և նրա գլխավոր պայմանի ուղղումից հետո ամբողջ աշխատանքի ընթացքում դրա ուղղված և անփոփոխ վիճակը հանդիսանում է պլանիմետրի գլխավոր պայմանը:

Պլանիմետրի քեզու աջ և քեզու ձախ վիճակում շահումների ընթացքում ցուցմունքների արդյունքների փոփոխությունը չի կարող ի հայտ բերել նրա գլխավոր պայմանի խախտման հետևանքով

ստացվոյ սխալի ուղղումը, որպիսն (IV-23) և (IV-24) բանաձեռի


$$\text{համապատասխան } \frac{U' + U''}{2} = U \cos \varphi : \quad \text{Գլխավոր} \quad \text{պայմանի}$$

խախտման սխալը չի հայտնաբերվում նաև պատկերի շրջանցման ընթացքում $\theta = 90^\circ$ լծակների միջև կազմված անկյան դեպքում, բանի որ $U' = U'' = U \cdot \cos \varphi :$

Այնպես որ, շրջանցելով պատկերը պլանիմետրով երկու քետոների դրույթուններով /աջի և ձախի/ դեպքերում ատացվում է նոյն սխալը, ինչ որ պլանիմետրի քետով մեկ դրույթան դեպքում:

Ուղղված պլանիմետրը խորհուրդ չի տրվում առանց շատ կարևոր անհրաժեշտության փոփոխել կամ շարժել հաշվիչ մեխանիզմը շրջատար լծակի վրա: Այլ կերպ ասած մի անգամ լավ կարգավորված պլանիմետրի շրջատար լծակի երկարությունը R-ը պետք է պահել անփոփոխ, քանի որ շրջատար լծակի R առանցքի և նրա վրա ամրացված հաշվիչ անիվի պտտման առանցքը, որոնք գուգահեռ են միացված և ամրացված է (N) ուղղիչ պտուտակով ու պահիլում է Q ելուստի միջոցով՝ պլանիմետրի հիմնական երկրաչափական պայմանն է, որը կարող է կրպիլ շարժումից խախտվել և առաջանալ նոր ուղղման և ստուգման անհրաժեշտություն:


ԲԵՎԵՌԱՅԻՆ ՊԼԱՆԻՄԵՏՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՔԸ



Գ.Ճ. 24

1. Բնեղակի լժակ, 2. Ծրջանցող լժակ, 3. Ջաշվիչ մեխանիզմ, 4. Ծանրոց, 5. Բրնձակ, 6. Գամային հենարան, 7. Ծրջանցող սայր, 8. Գամ, անգլիկ գամ, թեթ, 9. Անցու, 10. Լծակի տեղաշարժման միկրոստուտուակ

27. ՊԼԱՆԻՄԵՏՐԻ ՍԱԿԵՐԵՄՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԹԵՇՈՒԹՅՈՒՆԸ



Գ.Ճ. 25

1. Ծրջահարթակ, 2. Ջաշվիչ անիվ, 3. Ջաշվիչ անիվի վերներ, 4. Վերների և հաշվիչ անիվի արանքը կարգավորող պտուտակներ, 5., 6 Ջաշվիչ անիվի կարգավորման պտուտակներ, 7 Ջաշվիչ անսանդային անիվ, 8. Ծրջանցող լուսկի վերների սանդղակ,
9. Չնչարանային անիվ, 10. Լծակների միացման տեղ

Պլանիմետրով անշարժ բևեռը պատկերից դուրս գտնվելու դեպքում մակերեսը որոշելիս օգտվում էնք հետևյալ բանաձևից

$$P = C \cdot U$$

որտեղ C -ն պլանիմետրի բաժանման արժեքն է, իսկ U -ն բաժանումների թիվը, որը ստացվել է պատկերի արտաքին եզրագծով շրջանցիկ սայրի շրջանցումից:

Լոգարիթմելով նշված բանաձևը, այնուհետև դիմերենցելով անցնենք միջին քառակուային սխալին.

$$\left(\frac{m_p}{P}\right)^2 = \left(\frac{m_c}{C}\right)^2 + \left(\frac{m_u}{U}\right)^2$$

բանաձևում $\left(\frac{m_c}{C}\right)^2$ - պլանիմետրի մեկ բաժանման արժեքի միջին քառակուային հարաբերական սխալը որոշված կոորդինատային ցանցի երեք դմ² մակերեսի վրա կազմում է մոտ 1:1000 և այն կախում չունի շրջանցվող պատկերի չափերից:

$$\left(\frac{m_u}{U}\right)^2 - բաժանումների թվի միջին քառակուային սխալը$$

ստացվում է որպես արդյունք հետևյալ սխալների ազդեցությունից:

1. հաշվիչ աճիվի վրայի հաշվեցույցից,
2. պատկերի եզրագծով շրջանցելուց,
3. մեխանիկական շփումից,
4. շրջագծի խնդեքսի և ելային կետի սկզբնական և վերջնական ցուցանիշների անհամատեղիությունից:

1. Հաշվեցույցի միջին քառակուային սխալը կազմում է 0,5 բաժանմոնք, ուստի և մեկ շրջանցելուց կարդացվում է երկու ցուցմունք՝ սկզբում և վերջում, ստացվող սխալի արդյունքը կկազմի $0,5\sqrt{2} \approx 0,7$ բաժանմոնք և դա կախված չէ շրջանցվող պատկերի չափերից:

2. 2-րդ և 3-րդ սխալները համարյա միմյանց հավասար են և կարելի է ընդունել, որ դրանց ազդեցությունը համաչափ է, որը կինհի բառակուսի արմատ՝ շրջանցող պատկերի մակերեսի չափից

$$(2) = (3) = \sqrt{P} :$$

4-րդ սխալը կինհի փոքր, եթե պլանիմետրի ելակետային դրույթունում, նրա լծակների միջև կազմված անկյունը հավասար լինի ուղիղ անկյանը: Դրա համար էլ մակերեսի որաշման միջին քառակուային սխալը չի կարող փոքր լինել 1:1000-ից: Ընդհանուր միջին քառակուային սխալը պատկերի մեկ շրջանցման համար նորմալ շրջանցիկ լծակի $R=150-170$ մմ-ի դեպքում կարելի է հաշվել հետևյալ էմպիրիկ բանաձևերով մինչև 200սմ^2 մակերեսի դեպքում:

$$mp = 0,7c + 0,01 \frac{M}{10000} \sqrt{P} + 0,0003P \quad (\text{IV-26})$$

200 սմ²-ից մեծ մակերեսների դեպքում

$$mp = 0,7c + 0,005 \frac{M}{10000} \sqrt{P} + 0,0001P$$

Թույլատրելի անկապքը կոնտուրների մակերեսների գումարի և ընդհանուր տեղամասի մակերեսների միջև կամ կոնտուրների գումարի և սեկցիայի միջև հաշվարկվում է էմպիրիկ բանաձևով:

$$fp = 0,7c \sqrt{\Pi K + \Pi_{yr}} + 0,07 \frac{M}{10000} \sqrt{P} \quad (\text{Геодезические р-ты})$$

при землеустройстве А. В. Маслов и др. 1976г. стр. 133)

Բանաձևում՝ ս-ն պլանիմետրի մեկ բաժանման գինն է,

ΠK -ն կոնտուրների թիվը,

Π_{yr} -ն տեղամասերի թիվը,

M -ն հատակագծի մասշտաբը,

P -ն որոշելի մակերեսը հա-ով:

Մեր գործնական պարապմունքների օրինակի համար պլանիմետրով մակերեսի հաշվարկման սխալը որոշելիս կօգտվենք

/IV-26/ բանաձեկց. բանի որ $P=66,25$ հա, $C=0,1$ հա, $M=1:10000$ մակրում /առև գործնական պարապմունք 1 առաջադրանք/, ապա

$$fP = 0,7 \cdot 0,1 \sqrt{1 + 0,01} \frac{10000}{10000} \sqrt{66,25} + 0,0003 \cdot 66 = 0,17 \text{ հա}$$

28. ՍԱԿԵՐԵՄՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊՐՈՖԵՍՈՐ Ա.Ն.ՍԱՎԻՉԻ ԵՂԱՆԱԿՈՎ

Պրոֆ. Ա.Ն.Սավիչի եղանակով հարակագծերի կամ քարտեզների վրա մեծ տարածքների մակերեսների որոշումը կատարվում է այն դեպքում, եթե պահանջվում է ամբողջ տարածքի մակերեսը որոշել բարձր ճշտությամբ, իսկ եզրագծով սահմանափակվող կետերի կոորդինատները չկան կամ սահմանագծի քարդ ծռմովածության պատճառով անալիտիկորեն որոշելն անհնար է: Այլ կերպ ասած՝ Ա.Ն.Սավիչի եղանակը փոխարինում է անալիտիկ եղանակով մակերեսների որոշմանը և իր ճշտությամբ բոլորովին չի զիջում դրան:

Ա.Ն. Սավիչի եղանակի էռույթնը կայանում է նրանում, որ ամբողջ տարածքում, որի վրա գծված է կոորդինատային ցանց, առանձնացվում են լիիվ մակերես ունեցող դմ²-ները, այն նշանակենք P_0 , իսկ եզրերի մնացորդը դմ²-ում առանձնացվում են հողօգտագործության և նրա սահմանները եզրագծով մակերեսները:/Տես՝ թիվ 26 գծագիրը/:

Հաշվում ենք, $P_0 = 5$ դմ²=500հա, 1:10000մբ-ի դեպքում, եզրային կիսատ դմ²-ներն առանձնացնում ենք առանձին-առանձին սեկցիաների, որտեղ հողօգտագործության տարածքները նշանակենք a_1, a_2, a_3, a_4 տառերով, իսկ հողօգտագործությունից դուրս կամ սահմանագծից դրւում, բայց միևնույն դմ² մեջ գտնվող մակերեսները՝ համապատասխանաբար b_1, b_2, b_3, b_4 տառերով: Պկանիների անշարժ բևեռը տեղադրելով սեկցիաներից դուրս առանձին-առանձին

սեկցիաներում կատարում ենք մակերեսների որոշում հետեւյալ ձևով. միևնույն և և և մակերեսների միջարածության սահմանագծով կատարում ենք պլանիների բևեռների երկու դրույթներով շրջանցումները: Ամեն մի սեկցիայի շրջանցումը կատարվում է երկու անգամ, պլանիների բևեռի աջ և ձախ դրույթներով: Ստացված ցուցմունքները գրանցվում են համապատասխան աղյուսակի մեջ: /Տես թիվ 6 աղյուսակը/:

Որոնելի մակերեսները սեկցիաներում արտահայտված հեկտարներով նշանակենք a_1, a_2, a_3, a_4 -ով, լրիվ բառակուսինների մակերեսները համապատասխանաբար կլինեն՝

$$P_1 = a_1 + b_1, P_2 = a_2 + b_2, P_3 = a_3 + b_3, P_4 = a_4 + b_4$$

Այնպես, ինչպես մակերեսների հեկտարային մեծության և պլանիների բաժանումների թվի միջև գոյություն ունի ուղիղ համեմատականության կապ, կարելի է գրել

$$\frac{Pa_1}{a_1} = \frac{P_1}{a_1 + b_1}, \quad \frac{Pa_2}{a_2} = \frac{P_2}{a_2 + b_2} \quad \text{և այլն, որտեղից.}$$

$$Pa_1 = \frac{P_1 \cdot a_1}{a_1 + b_1}, \quad Pa_2 = \frac{P_2 \cdot a_2}{a_2 + b_2}, \quad Pa_3 = \frac{P_3 \cdot a_3}{a_3 + b_3}$$

Այս բանաձեկով հաշվարկվում և որոշվում են սեկցիաների մակերեսները, հաշվելով նաև արտաքին սահմանակից այն մակերեսները, որոնք լրացնում են կոորդինատային ցանցի լրիվ դմ²-ները: Բացի այդ՝ պետք է նկատի ունենալ, որ $\frac{P_1}{a_1 + b_1}, \frac{P_2}{a_2 + b_2}$ և այլ բանաձեկներն արտահայտում են պլանիների մեկ բաժանման արժեքները: Պկանիների մեկ բաժանման արժեքը վերոհիշյալ բանաձեկը որոշելիս դրա հարաբերական սխալը չի գերազանցում $\frac{1}{400}$ -ու:

Տեղանակի հողօգտագործության որոնելի մակերեսը կլինի.

$$P = P_0 + Pa_1 + Pa_2 + Pa_3 + Pa_4$$

Սավիչի եղանակով մակերեսների որոշման առանձնահատուկ արժանիքն այն է, որ մեխանիկորեն հաշվարկում է նաև թղթի դեղորմացիան /անս պարագաֆ 15/, որի վրա կազմված է հատակագիծը կամ քարտեզը: Փորրանում է պլանիմետրով պատկերների շրջանցումները, որով բարձրանում է որոշման ճշտությունը: Բարձրանում է նաև պլանիմետրի մեկ բաժանման արժեքի որոշման (C)-ի ճշտությունը, քանի որ:

$$C_1 = \frac{P_1}{a_1 + b_1}, \quad C_2 = \frac{P_2}{a_2 + b_2} \text{ և այլն,}$$

իսկ միջին $C = \frac{C_1 + C_2 + C_3 + \dots + C_n}{n}$, որը պելի մեծ ճշտություն կունենա, քանի առվորական եղանակով C-ի որոշման դեպքում:

Սավիչի եղանակով որոշվող տարածքների մեջ ինչքան շատ լինեն լրիկ դմ² քառակուսիների քանակը, այնքան քարձը է լինում մակերեսների որոշման ճշտությունը: Փորձը ցույց է տվել, որ եթե լրիկ քառակուսիների /դմ²/ քիվը մոտավորապես կազմում է ամբողջ հողատարածքի կեսը, ապա ամբողջ հողօգտագործության մակերեսն այս եղանակով 3-4 անգամ ավելի ճիշտ է որոշվում, քան առանձինառանձին կոնտուրներով:

Սավիչի եղանակով հատակագծի վրա մակերեսի որոշման օրինակը բերված է աղյուսակով: /Աղյուսակ 6/

Հառակագծի վրա մակերեսի հաշվարկումը պրոֆ. Ա.Ն.Սավիչի
եղանակով

Պահանջմետոր քենուային անսակի 1990թ. N 1307, R=134,9


Աղյուսակ 6.

Մեջմասայի համար	Մեջմասի նշանակություն	Հաշվարկում անհիմ վրա	Հաշվարկում անհիմ վրա	Տարրերի մասնակիություն	Դաշտական անհիմ վրա	Եղանակում անհիմ վրա	Պահանջմետոր քենուային անսակի մասնակիություն	Մեջմասայի նշանակություն
1	2	3	4	5	6	7	8	9
1	a ₁	<u>Բ.աջ</u> 1215 2833 4453	1618 1620 1619			1618 ⁸		130,52
		<u>Բ.ձախ</u> 6883 8500 0120	1617 1620 1618 ⁵					
	b ₁	<u>Բ.աջ</u> 1319 4661 8002	3342 3341 3341	3341 ⁵		3342 ²	400	0,08063
		<u>Բ.ձախ</u> 9211 2556 5897	3345 3341 3343					
	a ₁ + b ₁					4961		
2	a ₂	<u>Բ.աջ</u> 0833 2898 4963	2065 2065 2065	2065		2066 ²		166,68
		<u>Բ.ձախ</u> 8219 0288 2354	2069 2066 2066	2067,5			300	0,08067
	b ₂	<u>Բ.աջ</u> 4475 6129 7782	1654 1653 1653	1653,5		1652,5		
		<u>Բ.ձախ</u> 5421 7073 8724	1652 1651 1651	1651,5				
	a ₂ + b ₂					3718,7		

$$3. \frac{(a+b)_{\max} - (a+b)_{\min}}{a+b} \leq \frac{1}{400}; \quad \frac{1}{4960}; \quad \frac{1.7}{3718} = \frac{1}{2200}$$

ՄԱԿԵՐԵՍՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄ ՊՐՈՖ. Ա. Ն. ՍԱՎԻԶԻ ԵՊԱՄԱԿՈՎ

1	2	3	4	5	6	7	8	9
		<u>Բ.աց</u> 2825 4672 6516 <u>Բ.ձախ</u> 0730 2580 4427	1847 1844 1845 ⁵ 1847 1850 1847 1848 ⁸		1847			148,96
3		<u>Բ.աց</u> 4410 7524 0636 <u>Բ.ձախ</u> 2417 5528 8643	3114 3112 3111 3115	3113 3113 3113		400	0,08065	
	$a_3 + b_3$				4960			
		<u>Բ.աց</u> 1435 2957 4482 <u>Բ.ձախ</u> 2417 3941 5466	1522 1525 1525 1524 1524 1525	1523,5 1524,5	1524			123,00
4		<u>Բ.աց</u> 1408 3604 5796 <u>Բ.ձախ</u> 4410 6602 8794	2196 2192 2192 2192 2192 2192	2194 2193		300	0,08071	
	$a_4 + b_4$				3717			
		Ընդհանուր մակերեսը		7056,0	միջին նշանակությունը	0,08066	569,16	
		Լրիվ բառականակների մակերեսը				500		
		Հաղողականության մակերեսը				1069,16		



96. 26


$$\text{սանուզում} \quad 1.7056 \cdot 0,08066 = 569,17$$

$$2. \frac{P_{\max} - P_{\min}}{C} \leq \frac{0,00008}{0,08066} = \frac{1}{1080}$$


ՆԱԽԱԳԾՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ՄԵԹՈՂՆԵՐԸ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

29. ՆԱԽԱԳԾԱՎՆ ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԵՊԱՆԱԿ

Հաճախ նախագծման ժամանակ առաջադրվող մակերեսը մի անգամից չի ստացվում հատակագծի վրա, այլ գրաֆիկ եղանակով, կամ այլ եղանակով չափված մակերես P_1 -ը փոքր կամ մեծ է լինում P_2 առաջադրյալած մակերեսից P_2 -ով: Այդ դեպքում լրացվող P_2 կամ ավելցուկ P_2 -ը պետք է դառնա նախագծվող տեղամաս: Կախված սահմանագծի ծովովածությունից ու տեղահանվող սահմանագծի աստիճանից՝ մակերեսը կարող է չափվել և հաշվարկվել պլանիմետրով, մեխանիկական, գրաֆիկական և անալիտիկ եղանակներոց որևէ մեկով: Այդ պակասող կամ ավելցուկ մակերեսի P_2 -ի նախագծումը գրաֆիկորեն կարող է լինել եռանկյան կամ սեղանի տեսքով, դա կախված է նախագծվող գծի ուղղության պահանջվելիք պայմաններից:



գ. 27



գ. 28

Եռանկյունած նախագծում

Նախագծումն եռանկյան միջոցով կառարկում է այն դեպքում, երբ պարտադիր պայմանն է, որ նախագծվող գիծն անցնի F կետով, այսինքն՝ F սահմանայտնը չի կարելի փոփոխել /ուևս թիվ 27 գծագիրը/. Այդ դեպքում նախագծվող մակերեսը՝ P_2 -ը և հատակագծի վրա չափվող և բարձրության միջոցով որոշվում է, եռանկյան հիմքը՝ α -ն: Նախօրոք կառուցվում է F -ից և բարձրությունը $B-A$ -ի վրա ուղղահայաց իջեցնելով, որից հետո չափվում է h -ը: Ապա հայտնի $2P_2$ -ը բաժանվում է այդ h -ի վրա և ստացվում է α -ն:

$$\alpha = \frac{2P_2}{h} \quad /V-1/$$

Հաշվարկված α -ի մեծությունը գրանցվում է առանձին սխեմայի վրա կամ ամփոփագի մեջ, որն անհրաժեշտ է նախագիծը բնության մեջ տեղադրելու համար: Հնարավոր է, որ α -ն մեծ լինի BA -ից: Այդ դեպքում հաշվելով ABF եռանկյան մակերեսն այն գումարում ենք P_1 -ին, որից հետո մնացորդը P_2 -ի համար տանում ենք նոր MN նախագծային գիծ՝ AE գծի հետ հատելու պայմանով: Ուստի կառուցում ենք նոր եռանկյունի, որի մի էջը կլինի FA -ն, իսկ եռանկյան կառուցումը և հ-ի իջեցումը F -ից AE -ի վրա կկատարվի ինչպես նախորդում: Հնարավոր է, որ հ-ի իջեցումը BA -ի վրա 90° անկյուն կառուցելու պայմանով ստացվի այդ գծի շարունակության վրա /ուևս թիվ 28 գծագիրը/: Այդ դեպքում կարելի է FB -ն, ընդունել որպես եռանկյան հիմք և B կետում կանգնեցնելով ուղղահայաց BF -ին BO -ն, որի երկարությունը՝ $BO = \frac{2P_2}{FB}$, ստանալ O կետը, այնուհետև O կետից տանել զուգահեռ BF -ին: Այդ գուգահեռ գիծը շարունակելով, BA գծի հետ կհատվի K կետում: Այն կետը կլինի որոնելի եռանկյան BK կողմի երկարությունը, այսինքն՝ α -ն

Եռամբնական ու հիմքի հեռավորության նախագծման նշությունը
որոշելու համար լոգարիթմնը (V-1) բանաձեր՝

$$\alpha = \frac{2P_2}{h}$$

$$\ell n \alpha = \ell n 2 + \ell n P_2 - \ell n h$$

դիֆերենցենք՝

$$\frac{d\alpha}{\alpha} = \frac{dP_2}{P_2} - \frac{dh}{h}$$

որից հետո անցնենք միջ. քառակուսային սխալին՝

$$\left(\frac{m_\alpha}{\alpha}\right)^2 = \left(\frac{m_{P_2}}{P_2}\right)^2 + \left(\frac{m_h}{h}\right)^2 \quad (\text{V-2})$$

Եթե (V-2) բանաձևում P_2 -ը առաջադրված մակերեսն է և հաստատում է, ուստի $m_{P_2} = 0$ -ի, այդ դեպքում՝

$$\frac{m_\alpha}{\alpha} = \frac{m_h}{h} \quad (\text{V-3})$$

Հետևաբար՝ ինչ հարաբերական սխալով որ չափվել է եռանկյան քարձրությունը, նույն հարաբերական սխալով կստացվի հաշվարկային հիմքը և հակառակը:

Օրինակ՝ պետք է նախագծել $P_2=1,0 \text{հա}=10000 \text{մ}^2$: Չափվել է h -ը, $1:10000$ մասշտարի հատակագծի վրա, $h=400 \text{մ}$, չափման միջին քառակուսային սխալը՝ $m_h=0,8 \text{մ}-ի$, որոշենք հիմքի α -ի հաշվարկման միջին քառակուսային սխալը: m_h -ը α -ի և m_α -ի նշանակությունները կգտնենք կիրառելով (V-1) և (V-3) բանաձերը.

$$m_\alpha = \frac{\alpha \cdot m_h}{h}$$

$$\alpha = \frac{2P_2}{h} = \frac{2 \cdot 10000}{400} = 50 \text{մ}$$

$$m_\alpha = \frac{50 \cdot 0,8}{400} = 0,1 \text{մ}$$

(V-3) բանաձեր և բերված օրինակը ցույց են տալիս, որ չափման քարձրությունը, եթե մեծ է որոնելի հիմքից ու անգամ, ապա հաշվարկող հիմքի սխալը կլինի ու անգամ փոքր: $\alpha = h$ -ի դեպքում $m_\alpha = m_h$:

Եզրակացություն. նախագծման լինքացքում նշության քարձրագման նպատակով պետք է չափվող գծերը որոնք հանդիսանում են նախագծային գծերի եղակետային տվյալները, անել այնպես, որ լինեն ավելի երկար քան նախագծվող, որոնելի գծերը: Խոնդի լուծման այս դեպքն եռանկյան միջոցով, հատկապես եթե BF -ը ծառայում է որպես BFK եռանկյան հիմք, կամ չափվող կողմը, այդ դեպքում քարձրությունը որոշվում է՝ $h = BO = \frac{2P_2}{BF}$: Այսինքն՝ հորոնելին ավելի փոքր պետք է լինի BF -ից:

Որպեսզի ստանանք եռանկյան մյուս կողմը BA -ի վրա՝ BK -ն հարկավոր է Օ կետից անցկացնել ուղիղ, որը զուգահեռ լինի BF -ին մինչև BA գծի հետ հատվելը K կետում:

Համեմատած նախկին գծագրի հետ այս եղանակի թույլ կողմն այն է, որ

1/ պահանջվում է լրացուցիչ ժամանակ OК գծի կառուցման վրա.

2/ այս եղանակը նշությամբ ավելի թույլ է, քան առաջինը, որովհետև առաջանում է ավելորդ սխալի ծագման ալբյուր BO քարձրության և OK գծերի կառուցման ժամանակ:

Միաժամանակ դիտարկված եղանակն ունի առավելություն, որը հույժ կարեուր է շատ պարզ ձևով բնության մեջ խնդրի կիրառման ժամանակ: Օրինակ՝ հայտնի է P մակերեսը: Բնության մեջ այն իրականացնելու համար լոգարիթմական քանոնի կամ ԷՀՄ-ի օգնությամբ, անմիջապես կրկնակի մակերեսը բաժանում ենք BF -ի

Վրա և ստացված BO-ն մասպավենով տեղադրում սովորական ձևով ուղղահայաց BF-ին:


$$\text{Ստացվում է } BO = 2P_2 : BF$$

Այսինքն, ստացված BO-ն էկերի միջոցով, կամ, եթե կարճ և աշքաշափով, ուղղահայաց ենք կանգնեցնում BF-ին և տեղադրում BO-ն, ստանում ենք ● կետը: Որից հետո՝ Օ կետում ուղղահայաց կանգնեցնելով BO-ին կամ զուգահեռ BF-ին, գիծը հատում ենք BA-ի հետ և ստանում K որոնելի կետը:

Սեղանաձև նախագծում

Սեղանաձև նախագծումը կատարվում է այն դեպքում, եթե նախագծող գիծը կամ սահմանագիծը պետք է լինի զուգահեռ սված կորմին: Այդ դեպքում ունենալով նախագծող $P_2 = P - P_1$ մակերեսը և հատակագծի վրա չափելով սեղանի միջին գիծը, հաշվարկում ենք սեղանի բարձրությունը, որից հետո հաշվարկվում են կողմնային կողերը:

Իր հարմարությամբ և ճշտությամբ սեղանաձև նախագծումը գիշում է եռանկյունաձևին, քանի որ խնդրի որոշման դժվարությունը կայանում է նրանում, որ հատակագծի վրա բավականին մեծ շշտությամբ պետք է որոշել սեղանի միջին գիծը, այնքանով, որ դրա որությունն անհայտ է հատակագծի վրա և անհայտ է նաև բարձրությունը:



Գծ. 29

Հարկավոր է նախագծել P մեծության մակերես, և այնպես, որ MN նախագծող գիծը կամ սահմանագիծն իր ուղղությամբ զուգահեռ լինի CD-ին: Դրա համար F կետից զուգահեռ ենք տանում DC-ին մինչև BA-ի հետ հատվելը Օ կետում (տես՝ թիվ 29 ա գծագիրը), որը կլինի FO գիծը:

Այնուհետև որևէ եղանակով որոշում են $OBCDF = P_1$ մակերեսը: Պարզ է, որ որոշված մակերեսը մեր առաջադրիւմ P-ից կլինի մեծ կամ փոքր P_2 -ի չափով $P_2 = P - P_1$: Այդ P_2 -ի տարրերության չափով մակերեսը, եթե պետք է ավելացվի, ասկա նախագծելով սեղանը կինը տվածից FO-ից աջ, իսկ պակասեցնելու դեպքում՝ FO-ից ձախ: Խնդիրը լուծելու համար որոշում ենք սեղանի (OFKL)-ի միջին գիծը α -ն հատակագծի վրա, ընտրելով աշքաշափով MN-ն այնպես, որ համապատասխանի (OFKL)-ը P_2 մակերեսին, որից հետո հաշվարկվում է այդ սեղանի նախանական բարձրությունը՝ h:

$$h = \frac{P_2}{\alpha} \quad (\text{V-4})$$

Մեղադրելով ստացված h -ի կեսը ուղղահայաց FO-ին և R կետով տանելով α_1 միջին գիծը զուգահեռ CD-ին, չափում ենք α_1 -ը:

Զավակած α_1 գծի և P_2 մակերեսի միջոցով գտնում ենք $h_1 = \frac{P_2}{\alpha}$ բանաձևով h_2 -ի նեծությունը որից հետո ըստ ստացված h_2 -ի և չափված α_1 -ի ստուգում ենք մակերեսը $P_2 = h \cdot \alpha_1 = h_2 \cdot \alpha_1$:

P_2 -ը չստանալու դեպքում՝ նայած մեծ է տփածից թե փոքր, նորից են որոշում α միջին գծի տեղը և հաշվարկը կրկնում այնքան, մինչև h_1 և h_2 -ի նշանակությունը /նույնապատճենի հաստատում P_2 -ին/ կամ h_1 և h_2 հատվածների տարրերությունն ավելին չփնի քան 0,2մ, որը գրաֆիկական սխալի կրկնակին է: Այս պայմանը բավարարելուց հետո α -ի կամ միջին գծի և h -ի որոշումները դադարեցնում ենք:

Ստանալով վերջնական հ-ի նշանակությունը, ուղղահայաց ենք կամքնեցնում FO-ին և ստուգված Q կետով տարվում է MN նախագծային գիծը՝ գրանցածությամբ:

Ի բարձրության նախագծան ճշտությունը գնահատելու համար լոգարիթմներ (V-4) բանաձեռ:

$$\ell n h = \ell n P_2 - \ell n \alpha$$

$$\text{ապա դիֆերենցելով.} \quad \frac{dh}{h} = \frac{dP_2}{P_2} - \frac{d\alpha}{\alpha}$$

և անցնելով միջին քառակուսային սխալին՝

$$\left(\frac{m_h}{h}\right)^2 = \left(\frac{m_{P_2}}{P_2}\right)^2 + \left(\frac{m_\alpha}{\alpha}\right)^2 \quad (\text{V.5})$$

Բանաձևում $m_{P_2} = 0$, քանի որ, մակերեսը տեսականորեն է ընտրված և հաստատում թիվ է ուստի՝ $\frac{m_h}{h} = \frac{m_\alpha}{\alpha}$:

Այսինքն՝ ի բարձրության որոշման հարաբերական սխալը հասկանը է միջին գծի չափման հարաբերական սխալին՝ ինչքան փոքր է սեղանի բարձրությունը համեմատած նրա միջին գծի հետ և

ինչքան փոքր են դրև և սեղանի կողմերի հետ կազմված ($\phi; \gamma$) անկյունները, այնքան արագ և ճիշտ է որոշվում բարձրության մեծությունը՝ ի: Եթե սեղանի բարձրությունը հ-ը մեծ է միջին գծից՝ α -ից կամ հավասար, ապա կարեկի է այլ ձևով նախագծել: Օրինակ, աշբաշավով տանել MN նախագծային գիծը և հաշվել առանձնացված մակերեսը՝ P_1 -ը և նորից $P_1 - P_2 = P_2$ չափով նախագծամբ շարունակել վերոհիշյալ եղանակով:

Դիտարկված օրինակներու եռանկյունաձև և սեղանաձև նախագծումներից երևում է, որ նախագծումն եռանկյան ձևով, համեմատաբար ավելի ճիշտ է և արդյունավետ այնպես, ինչպես որ նախագծի տվյալները շատ անելաւթեշտ են նաև այն բնության մեջ կիրառելու համար, իսկ այդ տվյալները ստացված են հաշվարկման հանալարիով: Սեղանաձև նախագծման դեպքում FK-ն և BL կողմնային կողմերը պետք է որոշել հատակածից ընդհանուր սխալներով, որը մոտավոր հաշվարկման և բաձրության սխալի մեջ մտնում է՝ ուստի թիվ 29ա գծագիրը/.

1/ Բարձրության տեղադրումից /0,08մ/ սխալ

2/ MN գծի անցկացումից /0,08մ/ սխալ

3/ FK և BL գծերի չափերի գրաֆիկական որոշումից ստացվող սխալներ:

Որպեսզի խուսափենք այդպիսի թվով սխալների կուտակումից, ապա FK-ն անհրաժեշտ է որոշել հետեւյալ բանաձևից:

$$Fk = \frac{h}{\sin \varphi} \quad \text{ա)$$

որտեղ անկյուն φ ստացվում է DC և FK գծերի դիրեկցիոն անկյունների տարրերությունից: BL հատվածը որոշվում է հետեւյալ բանաձևով.

$$BL = \frac{DF \cdot \sin \beta - CB \cdot \sin \alpha + h}{\sin \gamma} \quad \text{բ)$$

Այսեղ չ ԲԱ և CD գծերի դիրեկտուն անկյունների տարբեկությունն է: Ծառ հաճախ պատահում է այնպէս, որ նախագծող տարածքում լինում են այլ հողատարսություններ, որոնք չեն մտնում նախագծող տարածքի մեջ: Օրինակ՝ թիվ 29թ գծագրում՝ abed և այն: Այս դեպքում՝ P_2 -ի նախագծման ժամանակ դրանք հարկավոր է հանել $P_2 - (a + b + c + d)$ -ն:

Այսինքն BCDFKL-ից պետք է դրան զալ $(a + b + c + d)$ -ն: Խնդրի լուծման համար սկզբից նշվում է աչքաշափով նախագծային գծի MN-ի տեղը, որից հետո պետք է ընտրել α միջին գծի տեղն այնպէս, որ α միջին գծից հանված լինի S_2, S_4 -ը:

$$\alpha \text{ միջ} = \alpha - (S_2 + S_4) \quad \text{կամ} \quad \alpha \text{ միջ} = (S_1 + S_3) \quad h = \frac{P_2}{S_1 + S_3}$$

Հարկավոր է նշել, որ ինչքան կոնտուրային եզրագծերը լինեն ծովոված (ըստ), որոնք մտնում են նախագծող տեղամասի մեջ, այնքան մեծ սխալով կորոշվի $S_1 + S_3$ -ի գումարը, հետևաբար և՝ հ-ը: Քայլ, դրա վիճակին ինչքան փոքր է հ-ը համեմատած $(S_1 + S_3)$ -ի հետ, այնքան ավելի ճիշտ կստացվի հ-ի մեծությունը:

Սեղանաձև հողամասի նախագծումը կարելի է ոչ միայն միջին գծով, այլ նաև նրա երկու հիմքերի գումարով կատարել $h = \frac{2P_2}{FO + KL}$

Այդ դեպքում հատակագծից որոշվում է FO-ն և KL-ը, ապա հայտնի մակերեսի P_2 -ի կրկնակին քածանվում է դրանց գումարի վրա և որոշվում է հ-ը: Այս մեթոդը լավ է նրանվ, որ չի պահանջվում որոշել և կառուցել միջին գիծը, այլ միանգամից որոշվում է հ-ը: Շշատրյունն այս դեպքի համար մի քիչ ավելի մեծ է, քան նախորդ դեպքերի համար: Սեղանաձև նախագծման դեպքերը հիմքերի գումարով շատ լավ տված են որոշել ենք լաբորատոր պարապությունների ժամանակ /տես մեք. 2-


րդ և 3 րդ առաջադրանքների նախագծման աղյուսակի 7-րդ տողը $a + b'$ -ով որոշված և այն:

Կողմնային կողերը հաշվարկվում են:

$$C_1 = \frac{BC}{\Sigma h} \cdot h_1 \quad C_2 = \frac{BC}{\Sigma h} \cdot h_2 \quad \text{և այլն}$$

$$C_1 + C_2 = BC \quad \text{ստուգումն է}$$

գծ. 30ա



$$d_1 = \frac{DA}{\Sigma h} \cdot h_1$$


$$d_2 = \frac{DA}{\Sigma h} \cdot h_2$$

$$d_3 = \frac{DA}{\Sigma h} \cdot h_3$$

$$d_1 + d_2 + d_3 = AD$$

(V-6)

գծ. 30բ



30. ՏԵՂԱՍՍԱՍԵՐԻ

ՄՆԱԼԻՏԻԿ ԵՂԱՍՍԱԿՈՎ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ


Այս եղանակով նախագծումը կարելի է սկսել մինչև հատակագծի կազմումը /սխեմատիկ գծագրի վրա, որտեղ գրվում են կետերի կոորդինատները, գծերի և անկյունների մեծությունները՝ օգտվելով այդ տվյալներից, կամ մակերեսների հաշվարկման համար կազմված կոորդինատներով ամփոփագրից/: Հաշվարկները կատարելու ընթացքում, միաժամանակ կազմելով հատակագիծ, տվյալները ստուգվում են հատակագծի վրա, որի հնարակությունը սայս եղանակի կիրառման դեպքում շատ մեծ է:

Նախագծման անալիտիկ եղանակի դեպքում նախագծումը մեջ ընթացքով կարելի է կատարել այն դեպքերում, երբ նախագծող տեղամասն ունի եռանկյան կամ սեղանի տեսք: Մնացած բոլոր դեպքերում անալիտիկորեն հաշվարկվում է նախագծվող մակերեսի

որինքեւ մասի մակերեսը P_1 -ը Հաշվարկից հետո պարզվում է, որ այն լարող է լինել որոնելի մակերեսից P_2 -ից ինչպես մեծ, այնպէս և՝ փոքր եմանալով P_3 -ի և P_4 -ի տարրերությունը՝ որն ավելորդ $+P_2$, կամ պակասորդ, $-P_2$ -ով է ստացվում այդ մակերեսը ընդունում ենք որպես նախագծային մեծություն: Այնուհետև, միաժամանակ դեկավարվելով այս պայմանով, որ նախագծային MN գիծն անցնի մի որևէ բ կամ A կետով, նախագծումը կատարվում է եռանկյունաձև, որի մակերեսը նոյնպես հասկանար պես է լինի P_2 -ին, իսկ եթե պահանջվում է որ նախագծային գիծը գուգահեռ լինի տված CD կամ EO-ին, ապա նախագծումը կատարվում է սեղանի ձևով, որի մակերեսը նոյնպես պես է հասկանար լինի P_2 -ին:

Անալիտիկ եղանակի նախագծման դեպքում և հաշվարկումներում մակերեսի բոլոր մեծությունները, ինչպես նաև նրա կողմերի երկարություններն ստացվում (ab , $a \cdot b \cdot \sin \alpha$, a^2) արտահայտվում են քառակուսի մետրերով (m^2), որնք կորացվում են մինչև մեկ տասներդարսկան միավորը:

Հաշվարկումները կարող են կատարվել լոգարիթմական քանոնի և լոգարիթմների միջոցով, բայց E2U մեքնայի առկայության դեպքում դրանք կատարվում են ավելի արագ:



Հասուն ուշադրություն պես է դարձնել եռանկյունաչափական ֆունկցիաների հիմնային վրա Անականիկ նղանակի նախագծման դեպքում շատ հաճախ կատարվում է ուղիղ և հակադարձ գեղղեցիսկան խնդիրների լուծումներ: Հաճախ հանդիպում է նաև երկու ուղիղների հատումից առաջացած կետի կորդինատների որոշում և այլն: Ստորև բերում ենք անալիտիկ եղանակի նախագծման առանձին դեպքերի օրինակներ, որոնք շատ տարածված են և հաճախակի հանդիպում են գործնականություն:

Օրինակ՝ թիվ 31 գծագրի վրա տված է $P_{\text{բա}}=100$ հա, տված է սեղանի երկու հիմքերը՝ $a=500$ մ, $b=100$ մ և տրված է՝ $\alpha=30^\circ$, $\beta=60^\circ$

I-ին դեպք. Պահանջվում է այդ 100հա-ը նախագծել 4 հավասարամեծ մակերեսներով դաշտերի: Այսինքն՝ $P_1=P_2=P_3=P_4=100/4=25,0$ հա /անս աղյուսակ 34-ը/: Պայմանն է, որ նախագծով սեղանների հիմքերը լինեն միևնուն գուգահեռ: Վերջինս էլ գուգահեռ լինի AB-ին:

Նախագծման ժամանակ ամեն մի տեղամաս ունենում է սեղանի ձև՝ իր երկու հիմքերով գուգահեռ լինելով AB-ին կամ α -ին, իսկ AD և BC կողմնային կողերը α հիմքի հետ կազմում են α° և β° դեղիանուր անկյուններ:


Հայտնի է, որ սեղանի $2P=(a+b)h$ (ա) /անս թիվ 31ա գծագրը/ բացի այդ՝ թիվ 31ա գծագրից երևում է, որ $x=h \cdot \operatorname{ctg} \alpha$, $y=h \cdot \operatorname{ctg} \beta$,

$$\text{որից՝ } x+y = h(\operatorname{ctg} \alpha + \operatorname{ctg} \beta), \text{ բայց } x+y = a+b,$$

$$\text{այդ դեպքում՝ } h = \frac{x+y}{\operatorname{ctg} \alpha + \operatorname{ctg} \beta} = \frac{a+b}{\operatorname{ctg} \alpha + \operatorname{ctg} \beta} \quad (\text{V-8}):$$

անդադրելով (V-8)-ից հ-ի արժեքը (ա)-ի մեջ կատարնանք.

$$2P = \frac{a^2 - b^2}{\operatorname{ctg} \alpha + \operatorname{ctg} \beta} \quad (\text{V-9})$$



Գծ. 32

Բայց նախագծման ընթացքում հարկ է լինում հաշվել նախագծվող սեղանի երկրորդ հիմքը b_1 -ն, իմանալով առաջին և հիմքը և դրա հետ կողմնային կողերի կազմված α և β անկյունները, որոնք տեղադրելով և օգտվելով (V-9) բանաձևից.

$$b_1 = \sqrt{a^2 - 2P(\operatorname{ctg}\alpha + \operatorname{ctg}\beta)} \quad (\text{V-10})$$

Եթե նշանակենք $\operatorname{ctg}\alpha + \operatorname{ctg}\beta = K$ -ի, ապա՝ $b_1 = \sqrt{a^2 - 2PK}$,


իսկ, եթե՝ $2PK$ -ն նշանակենք A -ով, ապա՝ $b_1 = \sqrt{a^2 - A}$:

Ստանալով նախագծվող սեղանի երկրորդ հիմքը՝ կարող ենք որոշել h բարձրությունը.

$$h = \frac{2P}{a+b} \quad (\text{V-11})$$

Դրանից հետո հեշտ է որոշել կողմնային կողերի երկարությունները, որոնք շատ անհրաժեշտ են նախագիծը բնության մեջ տեղադրելու համար:

$$AD = \frac{h}{\sin \beta} \quad \text{և} \quad BC = \frac{h}{\sin \alpha} \quad (\text{V-12})$$



Ուղանկյուն սեղանի համար, եթե $\beta = 90^\circ$ -ի համաձայն (V-9) բանաձևի կստանանք՝ $2P = \frac{a^2 - b^2}{ctg\alpha}$

$$b = \sqrt{a^2 - 2Pctg\alpha} \quad (\text{V-13})$$

Նախագծումը կատարվում է (V-10)-(V-12) բանաձևերով, հատուկ համակարգումով՝ սխեմայով և աղյուսակի ձևով. տես գրքնական պարապմունքների N2 ստագողական աշխատանքը և աղյուսակ 14-ը:

Սկզբից դուքս է գրվում ընդհանուր անդամները՝ /տես թիվ 14 աղյուսակ/.

$$\alpha^\circ, \beta^\circ, \operatorname{ctg}\alpha, \operatorname{ctg}\beta, \sin \alpha, \sin \beta,$$

$$K = (\operatorname{ctg}\alpha + \operatorname{ctg}\beta).$$

$$A = 2P(\operatorname{ctg}\alpha + \operatorname{ctg}\beta) = 2PK,$$

Որից հետո՝ աղյուսակի մեջ տեղաբաշխված և տեղամասերի սյունակներից սկսում ենք հաշվարկը N1 տեղամասից, որտեղ գրվում է N1 դաշտի α -ն, այնուհետև 1,2,3,4,5-6 տողերը լրացնելուց հետո, 5 և 6-ի ($a^2 - A$) և $\sqrt{a^2 - A}$ -ի արժեքները տեղափոխում ենք 2-րդ դաշտի 2 և 3 տողերը և նորից նոյն հերթականությամբ հաշվում ենք 1,2,3,4,5,6 տողերը և 5 և 6 տողերը նորից տեղափոխում ենք 3-րդ դաշտի 2 և 3 տողերը և այլն: Վերջում, 4-րդ դաշտի 6-րդ տողում ստացվում է b -ի արժեքը, որը ստուգման նպատակով համեմատում ենք CD գծի հետ, եթե վերջինից չի տարբերվում ավելի քան 0,2 մետրով, որեմն ամեն ինչ ճիշտ է հաշվարկվել: Այդ գործընթացի ավարտից հետո նորից 1-ին դաշտի 7,8,9,10 տողերն ենք լրացնում, այնուհետև մյուս դաշտերի 7,8,9,10 տողերը: Վերջում, առողջման նպատակով կիրառելով հետևյալ բանաձևերը՝ արդյունքում ստացված մեռությունները չպետք է գերազանցեն 0,2մմ գրաֆիկական սխալի կրկնակի չափը.

$$h_1 + h_2 + h_3 + h_4 = \sum h$$

$$c_1 + c_2 + c_3 + c_4 = CB$$

$$d_1 + d_2 + d_3 + d_4 = AD$$

Թիվ 32ա գծագրութ պատկերված է հողօգտագործության մի մասը: Այդ օրինակի վրա լուծվում են մի շարք խնդիրներ: Թիվ 7 աղյուսակում բերված է հողամասի սահմանակետերի կոորդինատների ամփոփագիրը:

Աղյուսակ 7


կետ երի N	կոորդինատ անվանում եր	որինեց. անկյուն	զերի պրեկ.	կոորդինատային աճեցր		կոորդինատներ		N
				Δx	Δy	x	y	
T				+13301,07	-6793,78	T		
A	206°13'	287°13'	512,7	+151,76	-489,73	+13452,83	-7283,51	A
B		261°00'	285,4	-44,64	-281,90	+13408,19	-7565,41	B
C		71°05'	9°55'	462,1	+455,19	+13863,38	-7485,84	C
D		120°03'	69°52'	441,3	+151,89	+14015,27	-7071,50	D
E		159°19'	90°33'	308,5	-2,96	+14012,31	-6763,02	E
				+308,48				

II դեպք. Տեղամասում սրահանջվում է նախագծել $P=19,36$ հա, նախագծվող գիծը DK-ն պետք է անցնի D կետով: Տվյալ դեպքում մակերեսը $ABCD = P_1 < P$ /ուս. թիվ 32բ գծագիր/:

1) Որոշում ենք ABCD պատկերի մակերեսը՝ P_1 -ը համաձայն (IV-9) կամ (IV-10) բանաձևերի, որի արժեքները վերցնում ենք կոորդինատների ամփոփագրից. /թիվ 7 աղյուսակից/:

$2P=285,4x462,1x\sin 71^{\circ}05' +$ $+462,1x441,3x\sin 120^{\circ}03' +$ $+285,4x441,3x\sin 11^{\circ}08'$	$2P_1=131883x0,94599+$ $+203925x0,86559+$ $+125947x0,19309$	$2P_1=124760$ $+176515$ $+24319$
		$2P_1=325594 \text{ հ}^2$

$$P_1=16,28 \text{ հա}$$



Աշխատանքը կատարվում է ԷՀՄ-ով: Պակասորդ մակերեսը ստացվում է.

$$\begin{aligned} P &= 19,36 \\ P_1 &= 16,28 \\ P_2 &= 3,08 \text{ հա} \end{aligned}$$

$P_2=3,08$ հա մակերեսը նախագծվում է եռանկյան ծեռվ, որովհետև դառ պայմանի նախագծային գիծը պետք է անցնի D կետի վրայով:

2) Հաշվում են AD զծի ուղղությունը և հեռավորությունը A և D կետերի կոորդինատների միջոցով, հետեւալ բանաձևերով.

$$\operatorname{tg}(AD) = \frac{y_D - y_A}{x_D - x_A}; \quad d_{(AD)} = \frac{y_D - y_A}{\sin(AD)} = \frac{x_D - x_A}{\cos(AD)}$$

Աղյուսակ 9

Y_D	-7071,50	X_D	+14015,27
Y_A	-7283,51	X_A	+13452,83
$Y_D - Y_A$	+212,01	$X_D - X_A$	+562,44
$\tan(AD) = \frac{Y_D - Y_A}{X_D - X_A}$	0,37695	$Y_D - Y_A$	+212,01
$\sin(AD)$	+0,35271	$X_D - X_A$	+562,44
$\cos(AD)$	+0,93573	 	
ոռմը: $CL: 20^{\circ}39,2'$	$AD =$	601,09	$AD =$
դիրեկցիոն անկյուն: $= 20^{\circ}39,2'$	$AD_{\text{պլ}}$	601,08	

Աթյուն TAD(γ) հավասար է AT և AD գծերի դիրեկցիոն անկյունների տարրերությանը. /տես 32գ գծագիրը/

$$\gamma = (AT) - (AD) = 107^{\circ}13' - 20^{\circ}39' = 86^{\circ}34'$$

3)Հաշվում են ԱԿ գծի երկարությունը (որն անհրաժեշտ է նախագիծը բնույթամ մեջ տեղադրելու համար): Համաձայն (IV-7) բանաձևի.

$$AK = \frac{2P_1}{AD \cdot \sin \gamma} = \frac{61600}{600,1} = 102,65 \text{ մ}$$

Այսուղ առանձյան ADK-ի բարձրությունն է՝ ԱԿ հիմքի վրա իջեցված: Ստացված ԱԿ երկարությունը տեղադրվում է A-ից T կետի ուղղությամբ և ստացված K կետը կիմքի որոնելի կետը:

KD-ն նախագծային գիծն է,

KABCD-ն նախագծային P մակերեսը:

Եթե P_1 -ը ստացվեր մեծ P-ից, ապա ակներև է, որ եռանկյուն KAD-ն կլիներ AD գծից ձախ:

Եթե KAD եռանկյունը շատ փոքր է և AK հիմքը շատ անզա՛ է փոքր հ-ից, ապա լրացուցիչ մակերեսը կարելի էր նախագծել


գրաֆիկական եղանակով, ինչպիսիք §29-ում. /տես թիվ 27, 28, գծագրեր/:

III դեպք եթե ABCDմակը $P_1 > P$ հողամաս, որն ունի քառանկյան տեսք և մակերես ABCD-ն չափում ու հաշվարկվում է գծերի և անկյունների միջոցով (IV-9) բանաձևով: Ուստի՝ պահանջվում է նախագծել $P=10,08\text{հա}$, պայմանով, որ նախագծվող գիծն անցնի A կետով /տես թիվ 33ա գծագիրը/ և ըստ՝ 33 բ գծագրի:

$$2P_1 = a \cdot b \cdot \sin \beta_2 + a \cdot c \cdot \sin \beta_3 + b \cdot c \cdot \sin(\beta_2 + \beta_3 - 180^{\circ})$$

այս բանաձևի մեջ օ-ն փոխարինենք CL -ով, որը կլինի որոնելի գիծը տվյալ P_1 մակերեսով ինդրի լուծման համար

$$CL = \frac{2P_1 - a \cdot b \cdot \sin \beta_2}{a \cdot \sin \beta_3 + b \cdot \sin(\beta_2 + \beta_3 - 180^{\circ})} = \frac{\Sigma_1}{\Sigma_2}$$



զՃ.33

Աղյուսակ 10

1	β_2	71°05'	2	β_3	120°03'
4	b	285,4	3	$\sin(\beta_2 + \beta_3 - 180^\circ) = \sin 11^\circ 08'$	0,19309
5	a	462,1	7	$\sin \beta_3$	0,86559
6	$\sin \beta_2$	0,94599	11	$b \cdot \sin(\beta_2 + \beta_3 - 180^\circ)$	+55,11
8	$a \cdot \sin \beta_2$	437,14	9	$a \cdot \sin \beta_3$	+399,99
12	-2P	2016,00	14	Σ_2	455,10
10	$a \cdot b \cdot \sin \beta_2$	124760			
13	Σ_1	76840	15	$CL = \frac{\Sigma_1}{\Sigma_2}$	168,848

IV դեպք. Նախագծել $P=19,36$ հա MN սահմանագծով տեղամաս, որտեղ նախագծային գիծ MN -ը լինի ուղղահայաց AT -ին (կամ MN -ը լինի զուգահեռ տված ուղղության CB -ին), տվյալ դեպքում $P > P_1$ /սեւ թիվ 34 գծագիրը/

- Որոշում ենք $ABCD = P_1 = 16,28$ հա /առև Ա դեպքը/
- Հաշվում ենք AD գծի ուղղությունը և երկարությունը $AD = 601,08$: $T(AD) = 20^\circ 39'$ /առև Ա դեպքը/:

3. Հաշվարկում է ADF եռանկյան անկյունները դիրեկցիոն անկյունների տարրելության միջոցով.

$$\varphi = (AT) - (AD) = 107^\circ 13' - 20^\circ 39' = 86^\circ 34'$$

$$\omega = (DA) - (DF) = 200^\circ 39' - 197^\circ 13' = 3^\circ 26'$$


$$\psi = (FD) - (FA) = 17^\circ 13' - 287^\circ 13' = 90^\circ 00'$$

$$\sum = 180^\circ 00'$$

Անկյուն ψ -ն կարելի է չհաշվել, բանի որ այն, բայ պայմանի, հավասար է 90° -ի: Կախված այդ ուղղություններից.

$$(FD) = (TA) + 90^\circ = 287^\circ 13' + 90^\circ = 17^\circ 13'$$

$$\text{իսկ } (DF) = 287^\circ 13' - 90^\circ = 197^\circ 13'$$



4. Հաշվարկելով ADF եռանկյունը և AD գծի երկարությունը որոշում ենք AF և FD գծերի երկարությունները և այդ եռանկյան մակերեսը՝ հետևյալ բանաձևերով. $AF = \frac{AD \cdot \sin \omega}{\sin \psi}$,

$$FD = \frac{AD \cdot \sin \varphi}{\sin \psi}, \quad 2P_2 = AF \cdot FD \cdot \sin \psi$$

$$\Psi = 90^\circ$$
-ի դեպքում կոնտանանք.

Աղյուսակ 11

$AF = AD \cdot \sin \omega$	$FD = AD \cdot \sin \varphi$	$2P_2 = AF \cdot FD$
$AD = 601,08$	$AD \cdot \sin \psi = 601,08$	$AD \cdot \sin \psi = 601,08$
$\sin \psi = 1,00000$	$\sin \omega = 0,05989$	$\sin \varphi = 0,99821$
$AD \cdot \sin \psi = 601,08$	$AF = 36,00$	$FD = 600,00$
		$2P_2 = 21600$
		$P_2 = 1,08 \text{ հա}$

Մնում է նախագծել կամ $19,36-16,28-1,08=2,0$ հա $P_3=2,0$ հա

5. Նախագծվող P_3 մակերեսը պես է ունենա սեղանի ձև:
Հետագա խնդրի որոշումը բերվում է այդ սեղանի նախագծման և DM ու FN գծերի (իրոք AN=AF+FN) որոշմանը, որոնք անհրաժեշտ են նախագիծը բնության մեջ տեղադրելու համար:

Բայց դրանց ստացման համար անհրաժեշտ են σ և δ անկյունների որոշումը:

$$\delta = (DF) - (DE) = 197^{\circ}13' - 90^{\circ}33' = 106^{\circ}40'$$

$$\sigma = (AT) - (FD) = 107^{\circ}13' - 17^{\circ}13' = 90^{\circ}$$

6. Խնդրի հետագա լուծումը կատարվում է P_3 սեղանի մակերեսի նախագծումով, ինչպես 1-ին դեպքի համար և եզրափակվում է նախագծային հատվածների որոշումով DM=34,51մ և AN=69,06մ:

Այս խնդրը կարելի է որոշել մի քիչ այլ ձևով հաստկապես.

1.Գտնում ենք AT և DF գծերի հատման կետի (F) կոորդինատները:
Ունենք դիրեկցիոն անկյունները (AT)= $107^{\circ}13'$ և (DF)= $197^{\circ}13'$:

F կետի կոորդինատները ինչպես և AF ու DF հաշվումները կատարվում են հետևյալ բանաձևերով՝

$$\Delta X_{(AF)} = \frac{(y_D - y_A) - (x_D - x_A) \cdot \operatorname{tg}(DF)}{\operatorname{tg}(AT) - \operatorname{tg}(DF)}$$

$$x_F = x_A + \Delta X_{(AF)}, \quad y_F = y_A + \Delta Y_{(AF)}, \quad \Delta Y_{(AF)} = \Delta X_{(AF)} \operatorname{tg}(AT)$$

$$AF = \frac{\Delta X_{(AF)}}{\cos(AT)} = \frac{\Delta y_{(AF)}}{\sin(AT)}$$

$$DF = \frac{X_F - X_D}{\cos(DF)} = \frac{Y_F - Y_D}{\sin(DF)}$$

(V-14)

Այս բանաձևերով հաշվարկները բերված են աղյուսակի ձևով
աղյուսակ 12-ում/:

Աղյուսակ 12

X_n	+14015,27	$\operatorname{tg}(AT)$	3,22720	ΔY_{AF}	+34,43	X_F	+13442,16
	+13452,83	$\operatorname{tg}(DF)$	+0,30987	Y_A	-7283,51	X_D	+14015,27
X_A	+562,44	$\operatorname{tg}(AT)$	-3,53707	Y_F	-7249,08	$X_F - X_D$	-573,11
		$\operatorname{tg}(DF)$					
$\operatorname{tg}(DF)$	+0,30987	ΔX_{AF}	-10,67	$\sin(AT)$	+0,95519	$\cos(DF)$	0,95519
				$AF = \frac{\Delta y_{AF}}{\sin(AT)}$	36,05	DF	600,00
Y_D	-7071,50	X_A	+13452,83				
r_A	-7283,51	X_F	+13442,16	$\cos(AT)$	-0,29599	YF	7249,08
				$AF = \frac{\Delta X_{AF}}{\cos(AT)}$	36,05	YD	-7071,50
$Y_D - Y_A$	+212,01						
$(X_D - X_A)$	+174,28						
$\operatorname{tg}(DF)$						$YF - YD$	+177,58
						$\sin(DF)$	0,29599
						DF	599,95

2.ABCDF մակերեսի հաշվարկումը կոորդինատներով.

Աղյուսակ 13

	X	Y
A	+13452,8	-7283,5
B	+13408,2	-7565,4
C	+13863,4	-7485,8
D	+14015,3	-7071,5
F	+13442,2	-7249,1
A	+13452,8	-7283,5

$$2P_1=347208,87 \text{մ}^2$$

$$2P_1=99999652791,13 \text{ստոգում}$$

$$P_1=17,36 \text{ հա}$$

պակասույթ ճակերեսը հայաստ կլինի 19,36-17,36=2,0 P_v=2,0 հա:

3.Հաշվարկում I. σ և δ անկուսները, այնուհետև նախագծվում I.
P_v=2,0 հա, (սեղան DMNF), ինչպես ցույց է տրված վերևում /տես բիլ
34 գծագիրը/:

31.ՆԱԽԱԳԾՎՄԱՆ ՄԵՐԱԲՏԻԿ ԵՂԱՍԱԿԻ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տրված I. ABCD սեղանաձև հողամաս, որի չափերն են՝

$$AB=a=50,0 \text{ մ}$$

$$h=63,0$$

$$CD=b=100 \text{ մ}$$

$$AC=74,62 \text{ մ}$$

$$BD=63,79 \text{ մ}$$

Տրված է նաև, որ AB/CD-ին

Պարզ է, որ նման չափերով հողամասի մակերեսը

$$P = \frac{100+50}{2} \times 63,0 = 4725 \text{ մ}^2$$

$$P=4725 \text{ մ}^2$$

Պահանջվում է նախագծել երեք դաշտեր, որոնց մակերեսները լինեն՝

$$P_1=725 \text{ մ}^2$$


$$P_2=2000 \text{ մ}^2$$

$$P_3=2000 \text{ մ}^2$$

իսկ դաշտերի հիմքերը լինեն AB և CD -ն միմյանց գուգահեռ:

Նախքան նախագծումն, առաջին հերթին որոշենք այսպես ասած այն Կ. ընդհանուր գործակիցը, որն օգտագործվում է յուրաքանչյուր դաշտի չափերի հաշվարկման լինքացքում՝

$$K = \frac{a-b}{h} = \frac{50,0-100,0}{63,0} = -0,793651$$



հաշվարկումը և նախագծումը սկսում ենք յ դաշտից ըստ (V-10) բանաձևի.

$$b_1 = \sqrt{a^2 - 2P_1 K} = \sqrt{50,0^2 - 2 \times 725 (-0,793651)} = 60,42 \text{ մ}$$

$$\text{ըստ (V-11) բանաձևի } h = \frac{2P_1}{a+b_1} = \frac{2 \times 725}{50,0 + 60,42} = 13,13 \text{ մ}$$

II դաշտի համար

$$b_2 = \sqrt{b_1^2 - 2P_2 \times K} = \sqrt{60,42^2 - 2 \times 2000 (-0,793651)} = 82,66 \text{ մ}$$

$$h_2 = \frac{2P_2}{b_1 + b_2} = \frac{2 \times 2000}{60,42 + 82,66} = 27,96 \text{ մ}$$

III դաշտի համար

$$b_3 = \sqrt{b_2^2 - 2P_3 \times K} = \sqrt{82,66^2 - 2 \times 2000 (-0,793651)} = 100,04 \text{ մ}$$

Այսպիսով b_3 պետք է լիներ 100,0=CD-ին, բայց ստուգվել է $\Delta t = +0,04 \text{ մ}$

$$\text{այսինքն CD-ի ճշտությունը կազմեց } m = \frac{0,04}{100} = \frac{1}{2500}$$

$$h_3 = \frac{2P}{b_2 + h_3} = \frac{4000}{82,66 + 100,0} = 21,90$$

$$\text{ստուգում } h_1 + h_2 + h_3 + h_4 = h \quad \text{կամ} \quad 13,13 + 27,96 + 21,90 = 62,99,$$

այսինքն՝ տրված

$$h-\text{ից պակաս է } \Delta h = -0,01 \text{ մ:}$$

Նախագծված ընդհանուր դաշտերի ճշտությունը կազմում է՝

$$m_p = \pm \frac{P}{C} \sqrt{2} = \frac{4725}{2000} \times 1,42 = \pm 3,34 \text{ մ}^2$$

Նախագիծը բնության մեջ կիրառելու համար որոշում ենք նաև յուրաքանչյուր դաշտի կողմնային կողմերը $c_i; d_i$ -երը

$$c_1 = \frac{AC}{h} \times h_1 = \frac{74,62}{63,0} \times 13,13 = 15,55$$

$$c_2 = \frac{AC}{h} \times h_2 = \frac{74,62}{63,0} \times 27,96 = 33,12 :$$

$$c_3 = \frac{AC}{h} \times h_3 = \frac{74,62}{63,0} \times 21,90 = 25,94$$

Կատարենք կողմնային կողերի հաշվարկման ստուգումը
 $c_1 + c_2 + c_3 = AC$ կամ $15,55 + 33,12 + 25,94 = 74,61$:

$$\Delta \ell = -0.01, \text{ որս ընդունելի է, քանի որ } \frac{0,01}{74,61} = \frac{1}{7461} < \frac{1}{2000}$$

$$d_1 = \frac{BD}{h} \times h_1 = \frac{63,79}{63,0} \times 13,13 = 13,29$$

$$d_2 = \frac{BD}{h} \times h_2 = \frac{63,79}{63,0} \times 27,96 = 28,31 :$$

$$d_3 = \frac{BD}{h} \times h_3 = \frac{63,79}{63,0} \times 21,90 = 22,17$$

Ստուգենք d -երի հաշվարկման ճշտությունը.

$$d_1 + d_2 + d_3 = BD \text{ կամ } 13,29 + 28,31 + 22,17 = 63,77$$

$$\Delta \ell = -0,02; \quad \frac{\Delta \ell}{BD} = \frac{0,02}{63,79} = \frac{1}{3190}$$

Անալիտիկ եղանակով նախագծումը թ. 14 աղյուսակում. (գծագիր 36)

$$\text{Տրված } t, P=100 \text{ հա, } a=900 \text{ մ, } b_4=1005,2 \text{ մ, } h=1049,8 \text{ մ}$$

$$\alpha = 104^\circ 30', \beta = 81^\circ 00', BC=1084,3 \text{ մ, } AD=1062,9 \text{ մ}$$

Պահանջվում է անալիտիկորեն նախագծել 4 հավասարամեծ տեղամասեր, յուրաքանչյուրը՝ $100/4=25$ հա տարածությամբ, պայմանով, որ սեղանաձև դաշտերի հիմքերը լինեն միմյանց զուգահեռ:

Աղյուսակ 14

հ/հ	Բանաձևերը	Նախագծով տեղամասերը				ստուգումներ
		1	2	3	4	
1	$P \text{ մ}^2$	250000	250000	250000	250000	$\sum P = 100,0 \text{ հա}$
2	$a \text{ մ}$	900,0	927,4	954,0	979,9	
3	a^2	810000	860100	910200	960300	
4	$A = 2P(\cot \alpha + \cot \beta)$	-50100	-50100	-50100	-50100	
5	$a^2 - A$	860100	910200	960300	101040	
6	$b_i = \sqrt{a^2 - A}$	927,4	954,0	979,9	1005,2	$CD=1005,2$
7	$a+b$	1827,4	1881,4	1933,9	1985,1	
8	$h = \frac{2P}{a+b}$	273,6	265,8	258,5	251,9	$\Sigma h = 1049,8$
9	$c = \frac{h}{\sin \alpha}$	282,6	274,5	267,0	260,2	$BC=1084,3$
10	$d = \frac{h}{\sin \beta}$	277,0	269,1	261,7	255,3	$AD=1062,9$

Աղյուսակ 14-ը հաշվարկելու համար նախ հաշվում և լրացնում ենք ընդհանուր անդամները և Ա-ի բանաձեր:

Ընդհանուր անդամները.

$\alpha = 104^\circ 30'$	$\operatorname{ctg}\alpha = -0,2586$	$\sin \alpha = 0,9682$
$\beta = 81^\circ 00'$	$\operatorname{ctg}\beta = 0,1584$	$\sin \beta = 0,9877$

$$K = \operatorname{ctg}\alpha + \operatorname{ctg}\beta = -0,1002$$

$$P=250000 \text{ մ}^2 \quad 2P=500000 \text{ մ}^2$$

$$A = 2PK = 2P(\operatorname{ctg}\alpha + \operatorname{ctg}\beta) = 500000(-0,1002) = -50100$$

32. ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱԼԻՏԻԿ ԵՊԱՆԱԿԸ ՄՈՏԵՑՄԱՆ ԲԱՆԱՉԵՎԵՐՈՎ

Նախագծման անալիտիկ եղանակը պահանջում է շատ ժամանակ և ուղեկցվում է բավականին բարդ հաշվարկներով, համեմատած զրաֆիկական և մեխանիկական մեթոդների հետ: Այդ եղանակով ստացված տվյալները բավականին մեծ ճշուություն ունեն, սակայն երբ նախագիծը տեղադրվում է բնության մեջ, գործնականում տեղադրումը կատարվում է 1:1000-ից 1:1500 ճշտությամբ, որը լրիվ բավարարում է հողաշինարարական նախագծերի պահանջարկին, ուստի անալիտիկ եղանակի ճշգրիտ և բարդ հաշվարկների փոխարեն պրակտիկայում օգտվում են մոտեցման բանաձերով:

Օրինակ՝ նախորդ պայմանագրում բերված օրինակը, որը արտացոլված է N14 տղյուտսնում, կարելի է ավելի պարզ՝ մոտեցման բանաձերով հաշվարկել:

1/ Նախագծվող դաշտի բարձրությունը՝ հ սեղանաձև պատկերում կարելի է որոշել առաջին մոտեցմամբ, եթե հայտնի է ա հիմքը

$$h' = \frac{P}{a} \quad (\text{ա})$$

2/ Սթե հայտնի է դաշտում սեղանի մոտավոր երկրորդ հիմքը հ-ն, ապա 2-րդ մոտեցմամբ կորոշենք. $h'' = \frac{P}{b}$ (բ)

Որից հետո ստացված բարձրությունների նշանակություններից կալոյ ենք որոշել միջին բարձրությունը:

$$h \approx \frac{1}{2}(h' + h'') = \frac{1}{2}\left(\frac{P}{a} + \frac{P}{b}\right) \quad (\text{գ})$$

բայց անհայտ նշանակության հ-ն կարելի է արտահայտել ա-ի միջոցով համաձայն (V-8) բանաձևի՝ $b = a - h(\operatorname{ctg}\alpha + \operatorname{ctg}\beta)$


$$\text{Նշանակելով } \operatorname{ctg}\alpha + \operatorname{ctg}\beta = K \quad (\text{դ})$$

$$\text{Կգրենք } b = a - hK \quad (\text{ե})$$

• Օղնարիմներով հ-ի մոտավոր արժեքը /ա-ից / և /կ /-ի մեջ, կստանանք՝

$$h \approx \frac{1}{2}\left(\frac{P}{a} + \frac{P}{a - \frac{P}{a}k}\right) \quad (\text{V-15})$$

Վերոհիշյալ մոտեցմող բանաձերով ստորև՝ N15 աղյուսակում համակարգված են և նախագծված նախորդ օրինակի $P=100\text{հա ABCD}$ հողատակածությունը չորս հավասարամեծ տեղամասերի 'տես' բիկ 36 գծագիրը/



Նախ հաշվում ենք ընդհանոր անդամները.

$$\alpha = 104^\circ 30' \quad ctg \alpha = -0,2586 \quad \sin \alpha = 0,9682$$

$$\beta = 81^\circ 00' \quad ctg \beta = 0,1584 \quad \sin \beta = 0,9877$$

$$x = h \cdot ctg \alpha = 1049,8 \cdot (-0,2586) = -271,5$$

$$y = h \cdot ctg \beta = 1049,8 \cdot (0,1584) = 166,3$$

$$K = ctg \alpha + ctg \beta = -0,1002 \quad \text{կամ}$$

$$K = \frac{a-b}{h} = \frac{900-1005,2}{1049,8} = -0,1002$$

Որից հետո հաշվարկում և լրացվում է աղյուսակ 15-ը:

հ/հ	Բանաձևեր	տեղամասեր				սուբյեկտներ
		1	2	3	4	
1	$P_1 = P_2 = P_3 = P_4 = \frac{P}{4} = \frac{h^2}{4}$	250000	250000	250000	250000	100,0 հա
2	a, \dots, \tilde{a}	900,0	927,4	954,0	979,9	
3	$h' = \frac{P_1}{a_1}$	277,6	269,6	262,0	255,6	
4	$h'xk$	-27,8	-27,0	-26,2	-25,6	
5	$b'_1 = a_1 - \frac{P_1}{a_1} \cdot k$	927,8	954,4	9802	1005,5	
6	$h'' = \frac{P}{b'_1}$	269,6	262,2	255,0	248,4	
7	$h' + h''$	547,2	531,7	517,0	504,0	
8	$h = \frac{h' + h''}{2}$	273,6	265,8	258,5	252,0	$\Sigma h = 1049,9$ $\Delta h = +0,111$
9	hxk	-27,4	-26,6	-25,9	-25,2	
10	$a_1 - hxk$	927,4	954,0	979,9	1005,1	$CD = b =$ $= 1005,2$ $\Delta \ell = -0,1$
11	$c_1 = \frac{h}{\sin \alpha} = \frac{h}{0,9682}$	282,6	274,6	267,0	260,2	$BC = 1084,2$
12	$d_1 = \frac{h}{\sin \beta} = \frac{h}{0,9877}$	277,0	269,1	261,7	255,1	$AD = 1062,9$

Տեղամասերի կողմնային կողերը C_1, C_2, C_3, C_4 և d_1, d_2, d_3, d_4 -ը շատ անհրաժեշտ են նախագիծը բնության մեջ տեղադրելու համար և պրամապ որոշված են V-12 բանաձևերով:

Համեմատելով ստացված արդյունքները նոյն տեղամասերի հետ, որոնք որոշված են աղյուսակ 14-ում և հաշվարկված են ճշգրիտ բանաձևերով, տեսնում ենք, որ համարյա նոյն մեծություններու են ստացվել:

33. ԳՐԱՖՈՎՆԱԼԻՏԻԿ ԵՎԱՆԱԿՈՎ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՍԱՄՆԱՎՈՐ ԴԵՊՔ

Տրված է GCEMNKF յոթ սահմանայուներով սահմանազատված բազմանկյան տեսրով հողատարածություն: Դաշտային շափումներով հայտնի են բոլոր յոթ կողմերի երկարությունները: Բազմանկյունները իր մեջ պարունակում են 4 սեղանաձև հողատարածքներ, որոնց մակերեսներն առանձին-առանձին հայտնի են՝ P_1, P_2, P_3, P_4 : Հայտնի են նաև սեղանների բարձրությունները h_1, h_2, h_3, h_4 : Տվյալները նշանակում են բոլոր սեղանների անհայտ մեծության հիմքերը միմյանց զուգահեռ են:

Պահանջվում է՝ 1.Նախ կառուցել հատակագիծը 1:10000 մասշտաբով

2. Նախագծել Յ հավասար մակերեսներով տեղամասեր, պայմանով, որ դրանց հյութերը լինեն բոլոր դաշտերի հիմքերին զուգահեռ:

Հաշվարկը և նախագծումը կատարվում է գծագրավերլուծական ձևով՝ միաժամանակ զուգահեռաբար կառուցելով նաև հատակագիծը:

Տրված տվյալներով և սխեմա գծագրի միջոցով նախ որոշում ենք միանույն ջնշիանուր կողմնային կողմ ունեցող երկու հարեան դաշտերի ընդհանուր բարձրությունները՝

$(h_1 + h_2), (h_3 + h_4), (h_2 + h_3) /$ սիս սխեման/¹, որի հետևանքով հայտնի է դաշտում յուրաքանչյուր սեղանաձև հողամասի բարձրությունը թե աշից և թե ձախից: Կատարում ենք սեղանաձև դաշտերի կողմնային կողմների որոշումը հետևյալ բանաձևերով.

Կողմնային կողմների որոշումի գծագրի ձախից.

$$CE_1 = \frac{CE}{h_1 + h_2} \cdot h_1 = \frac{1185,0}{1161,0} \cdot 260 = 265,4 \text{ մ}$$

$$E_1 E = \frac{CE}{h_1 + h_2} \cdot h_2 = \frac{1185,0}{1161,0} \cdot 901,0 = 919,6 \text{ մ}$$

Սառուցում ենք ստացված մեծությունները

$$CE_1 + E_1 E = CE = 265,4 + 919,6 = 1185,0 \text{ մ}$$

$$EK_1 = \frac{EM}{h_3 + h_4} \cdot h_3 = \frac{950,0}{939,2} \cdot 399,2 = 404,0 \text{ մ}$$

$$K_1 M = \frac{EM}{h_3 + h_4} \cdot h_4 = \frac{950,0}{939,2} \cdot 540,0 = 546,0 \text{ մ}$$

Սառուցում ենք՝ $EK_1 + K_1 M = EM = 404,0 + 546,0 = 950,0 \text{ մ}$


Կողմնային կողմների որոշումը գծագրի աշից

$$FE_1 = \frac{FK}{h_2 + h_3} \cdot h_2 = \frac{1310,0}{1300,2} \cdot 901,0 = 907,8$$

$$E_1 K = \frac{FK}{h_2 + h_3} \cdot h_3 = \frac{1310,0}{1300,2} \cdot 399,2 = 402,2$$

Սառուցում՝ $FE_1 + E_1 K = FK = 907,8 + 402,2 = 1310,0$

Ունենալով վերսիվյալ կողմների երկարությունները և ի բարձրությունները՝ որոշում ենք x անհայտները հետևյալ բանաձևերով՝



գծ.37

Գծագրի ձախ կողմից.

$$X_2 = \sqrt{(CF_1)^2 - h_1^2} = \sqrt{265,4^2 - 260,0^2} = 53,2$$

$$X_3 = \sqrt{(F_1E)^2 - h_2^2} = \sqrt{919,6^2 - 901,0^2} = 184,4$$

$$X_4 = \sqrt{(EK_1)^2 - h_3^2} = \sqrt{404,0^2 - 399,2^2} = 60,1$$

$$X_5 = \sqrt{(K_1M)^2 - h_4^2} = \sqrt{546,0^2 - 540,0^2} = 82,1$$

Գծագրի աջ կողմից.

$$X_6 = \sqrt{(NK)^2 - h_4^2} = \sqrt{560,0^2 - 540,0^2} = 150,6$$

$$X_7 = \sqrt{(KE_1)^2 - h_5^2} = \sqrt{(402,2)^2 - (399,2)^2} = 49,0$$

$$X_8 = \sqrt{(FE_1)^2 - h_6^2} = \sqrt{(907,8)^2 - (901,0)^2} = 110,9$$

$$X_1 = \sqrt{(FG)^2 - h_7^2} = \sqrt{(440,0)^2 - (260,0)^2} = 355,0$$

Հաշվարկված տվյալների միջոցով դժվար չէ որոշել յուրաքանչյուր սեղանի b_1, b_2, b_3, b_4 հիմքերը /տես զծ.38/:

$$b_1 = CG - X_2 + X_1 = 650,0 - 53,2 + 355,0 = 951,8$$

$$b_2 = b_1 - X_3 - X_8 = 951,8 - 184,4 - 110,9 = 656,5$$

$$b_3 = b_2 + X_4 - X_7 = 656,5 + 60,1 - 49,0 = 667,6$$

$$b_4 = b_3 + X_5 + X_6 = 667,6 + 82,1 + 150,6 = 900,3$$

Քանի որ $b_4 = MN = 900,3$ մ կնշանակի հաշվարկումը կատարվել է միշտ:


Հատակագիծը 1:10000 մասշտաբով կազմվում է միլիմետրական բրի վրա հետևյալ կերպ՝ բոլոր ներքին տողում գծվում է հորիզոնական լրությանը $GC=650,0$ մ 0,1մ-ի ճշտությամբ, որից հետո, քանի որ, ոչ մի անկյուն հայտնի չէ, հետևաբար կողմնային կողմերը կառուցելու համար վարվում ենք հետևյալ կերպ:

Ը կետից աջ տեղադրելով $X_2 + X_3 = 237,6$ մ-ը, ստացված կետից ուղղահայաց բարձրանում ենք $h_1 + h_2 = 1161,0$ մետր և ստանում ենք Ե կետը: Ե կետից դեպի ձախ տեղադրում ենք $x_4 + x_5 = 142,2$ մ և ստացված կետից վերև ենք բարձրանում ու ստանում ենք M կետը: M կետից հորիզոնական գիծ ենք գծում դեպի աջ՝ $b_4 = 900,3$ մ-ի չափով, ստանում ենք N կետը: N կետից դեպի ձախ տեղադրելով $X_6 = 150,6$ մ,

ստացված կետից ներքեւ ուղղահայաց իջնում ենք $h_1 = 540,06$ -ի չափով և առանում ենք K կետը /և այլն/, վերջացնելով բազմանկյան կառուցումը: Վերջում ստացվում է կտորուցման հետևանքով անկապք, որը չպետք է գերազանցի $\pm 0,3\text{մ}$ գրաֆիկական սխալից: Ակտերն և որ ստացվող անկապքն առաջանում է միմիայն գծերի տեղադրումից, իսկ գծերի տեղադրման ընթացքում ամեն մի գիծն իր երկու ծայրակետով տեղադրման սխալը կազմում է չափակարգինի տրամագծի գրաֆիկական սխալի չափով, որ $=0,08$ մմ /առև. Տ8/: Եսկ յուրաքանչյուր կետի տեղադրման համար չափակարգինով տեղադրում է 2 գիծ՝ եռիգանական և ուղղահայաց, այսինքն՝ x -ը և y -ը: Հետևաբար՝ անկապքի չափը կորոշվի $m = 0,08\sqrt{n \cdot 2}$, որտեղ n -ը՝ կետերի թիվն է՝ $=7$ -ի:

$$m = 0,08\sqrt{7 \cdot 2} \approx \pm 0,3$$

Հաշվարկման գործընթացին համընթաց, գուգահեռաբար կառուցելով գծագիրը 1:10000 մ-ով կունենանք հատակագիծը /ներքին թիվ 38 գծագիր/:



• 38

Հատակագիծը կառուցելուց հետո պահունչվում է նախագծել ամրադր հողատարածքի վրա Յ հավասար մակերեսներով տեղամասեր, պայմանվ, որ դրանց հիմքերը միմյանց լինեն զուգահեռ:

Հաշվարկը կատարում ենք անալիստիկ եղանակով, որի տվյալները բերվում է աղյուսակում №6-ում:

Հաշվարկը կատարում ենք անալիտիկ եղանակով, որի տվյալները
բերվում է աղյուսակում N16-ում

$$\begin{array}{c} \text{համար} \\ \hline 951,8 & 656,5 \\ 901,0 & \end{array} \quad 0,32775$$

Ն նախագծի ո՞ր դաշտից է
ծփող նախազօծում
դաշտի մակարդակ

54,0

$$b_2'' = \sqrt{(951,8)^2 - 66,4 \cdot 10^4 \cdot 0,32775} = 830,5$$

$$\text{իսկ } 3\text{-րդ դաշտի համար՝ } b_3'' = \sqrt{b_2}$$

$$2P=29,4 \text{ հա,}$$

$$\begin{array}{c} \text{3-րդ} \\ \hline 656,5 - 667,6 \\ 399,2 \end{array} = 0,02781$$

$$b_3'' = \sqrt{(656,5)^2 - (-0,02781) \cdot 10^4 \cdot 29,4} \approx 660,8$$

Պետք է նշել, որ այս բանաձևերով հաշվարկելուց, եթե ստացվում է ութերորդ սյունակի h'' նախագծային արժեքները, միանշանակ կարող է չբավարարվել $h_1'' + h_2'' = h_2$ պայմանը. կամ $h_3'' + h_4'' = h_3$ պայմանը, հետևաբար b'' -ին տալիս ենք մոտավոր արժեքներ, այնքան, մինչև որ անպայման ($h_1'' + h_2'' = h_2$) և ($h_3'' + h_4'' = h_3$) պայմանների բավարարումը:

Աղյուսակի 7-րդ սյունակը յուրաքանչյուր դաշտի հիմքերի գումարն է:

8-րդ սյունակը նախագծվող սեղանների բարձրություններն են, որոնք որոշվում են $h_1'' = \frac{2P}{b_1 + b_2''}$ բանաձևով:

9-րդ սյունակը գծագրի ձախ կողմնային կողմերի երկարությունները գանելու համար դրանց համապատասխան բարձրություններն են, որը գծագրին նայելուց պարզ է, թե ո՞ր բարձրությունների գումարը պետք է գրի առնել, որ հաշվարկի համապատասխան կողմնային կողմը:

Աղյուսակի 1-ին սյունակը նախագծվող դաշտի համարներն են I, II, III:

2-րդ սյունակը նախագծվող դաշտի մակերեսները հա-ով: 3 և 4-րդ սյունակները գոյություն ունեցող դաշտերի առանձին-առանձին այն տարածքներն են, որոնք անջատվում և միացվում են նախագծվող դաշտերին: 5-րդ սյունակն անջատվող և միացվող տարածքների կրկնակի մակերեսներն են՝ 2P հա.

6-րդը՝ նախագծվող դաշտերի հաշվարկվող հիմքերն են, որոնք որոշվում են հետևյալ բանաձևերով. տես (V-10) բանաձևը:

10-րդ սյունակը՝ ծախս կողմնային կողմերի նրկայություններն են:
որոնք որոշվում են՝ $CI = \frac{CE}{h_1 + h_2} \cdot (h_1 + h_2) = \frac{1185,0}{1161,6} \cdot 632,5 = 645,6$ մ

$$IE = \frac{CE}{h_1 + h_2} \cdot h_1 = \frac{1185,0}{1161,6} \cdot 528,5 = 539,4 \text{ մ}$$

սաուզում $CI+IE=CE$ կամ $645,6+539,4=1185,0$ մ

$$ET = \frac{-EM}{h_3 + h_4} \cdot h_3 = \frac{-950}{939,2} \cdot 223,1 = 225,7 \text{ մ}$$

$$TM = \frac{EM}{h_3 + h_4} \cdot (h_3 + h_4) = \frac{-950}{939,2} \cdot 716,1 = 724,3 \text{ մ}$$

սաուզում՝ $ET+TM=EM=225,7+724,3=950$ մ

Նույն սկզբունքով որոշում են կողմնային կողմերը՝ աջից՝

$$FI' = \frac{-EK}{h_2 + h_3} \cdot h_2 = \frac{-1310}{1300,2} \cdot 372,5 = 375,3 \text{ մ}$$


$$IT_i = \frac{-EK}{h_2 + h_3} \cdot (h_2 + h_3) = \frac{-1310}{1300,2} \cdot 751,6 = 757,3 \text{ մ}$$

$$TK = \frac{FK}{h_2 + h_3} \cdot h_3 = \frac{1310}{1300,2} \cdot 176,1 = 177,4 \text{ մ}$$

սաուզում՝ $FI' + IT_i + TK = FK$ կամ՝ $375,3+757,3+177,4=1310,0$ մ:

Ստացված բայր տվյալները կարմիր գույնով, որպես
նախագծային տվյալներ գրվում են նշահարման գծագրի վրա, որը
կարող է ծառայել որպես հիմք բնության մեջ նախագիծը տեղադրելու
համար: Արդյունքում՝ դաշտում ամրացվում են սահմանայուները:

Նշանակման գծագիր / լինզա/



Գ. 39

- Բնության մեջ գայություն տեսքով սահմանակետեր
- Նախագծվող սահմանակետեր

ՆԱԽԱԳԾԻ ՏԵ՛ՂԱՓՈԽՈՒՄԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նախագիծը բնության մեջ տեղադրել նշանակում է բնության մեջ ամրացնել սահմանայուները, անց կացնել սահմանագծերը, տեղանքի վրա տեղադրել նախագծված ճանապարհների, ոռոգման ցանցի և այլ իրադրությունները:

Նախագիծը բնության մեջ անցկացնելու համար անհրաժեշտ է կատարել պարզ, հասարակ հաշվարկներ, որպեսզի նվազագույն միջոցներով և կարճ ժամանակում առանց կրպիտ սխալների այն տեղադրվի բնության մեջ: Տնտեսությունների արտաքին և ներքին սահմանայուների ամրացումից հետո պետք է դրանց վրայով անցկացնել /1 և 2 կարգի/ պողիզոնոմետրիայի ընթացքներ և 4-րդ դասի նիվելիրացում: Դրանց հետո հաշվել և ստանալ սահմանայունների կոռորդինատները և բացարձակ բարձրություններն ու գրանցել հատուկ ամփոփագրերի մեջ: Ամփոփագրերը կազմվում են 3 օրինակից, որից մեկական օրինակ՝ հանձնվում է հողօգտագործող համայնքներին կամ կազմակերպություններին, երկրորդ օրինակ՝ պահպանվում է համբաւառության կադաստրային կոմիտեի համապատասխան վարչությունում, իսկ երրրդ՝ օրինակը՝ ուղղակի մնում է մարզպետարանի հողաշինարարական վարչությունում: Սահմանայունները և դրանց տվյալներն օգտագործվում են հետագայում տվյալ վայրերում գեղողիզիական և հողաշինարարական աշխատանքներ կատարելու համար՝ որպես ելակետային հիմքի կետեր: Նախագծի բոլոր տվյալները՝ գծեր, անկյուններ և այլն՝ տեղափոխները բնության մեջ, փաստորեն հանույթի հակադարձ գործնքացն է: Պետք է այդ աշխատանքները կազմակերպել այնպես, ինչպես հանույթի գործնքացում թույլ տված սխալները հասցվում էին

նվազագույնի կամ հրահանգով սահմանված թույլատրելիքից ոչ ավելի, ևսպա այս գործնքացում այնպես պետք է կատարել, որ լինի սխալների նվազագույնը: Ինչպես նախագծումը, այնպես էլ տեղափոխումը բնության մեջ նախանարարները է կատարել անալիտիկ եղանակով, որի դեպքում, համեմատած գրաֆիկ եղանակի հետ՝ 7-10 անգամ ճշտությունը բարձր է լինում: Հողօգտագործության դաշտերը, տեղամասերը, ճանապարհները, ոռոգման ցանցի բաժանարարները և այլն, ինչքան հնարավոր է պետք է լինեն միմյանց զուգահեռ, ուղղահայաց, որը բարձրացնում է նախագծով նախատեսվող գյուղատնտեսական հողամշակման որակը և արդյունավետությունը:

Ընդհանրապես հողաշինարարական ամբողջ գործնքացը կատարվում է 3 փուլը՝ 1/ հանույթ, 2/ նախագծում, 3/ նախագծի անցկացում բնության մեջ: Այս 3 փուլերն իրենց ճշտություններով խիստ կապակցված են: Եթե առաջին փուլի՝ հանույթի ժամանակ, թույլ է տրվում սխալ, ապա այդ սխալը կանդրադառնա երկրորդ փուլի վրա: Կամ՝ եթե նախագծումը սխալներով է կատարվել, ապա այդ սխալները կլինեն նաև տեղափոխման ժամանակ և հակառակը:

Նախագիծը բնության մեջ անց է կացվում հետևյալ մեթոդներով.

1/ Չափատեղադրություններով- չափվող սարքեր /ժապավեն, ոլուխտկա/

2/ Անկյունաչափությամբ-թեռոդլիտով և չափվող գործիքով, վերջին ժամանակներում էլեկտրոտախեումեորելով.

3/ Գրաֆիկորեն՝ մենցույալով

Այդ երեք մեթոդները հնարավոր են ցանկացած հողաշինարարական նախագծի դեպքում և հանույթի գանձացած տեսակի նյութերի հիման վրա: Նախագծի բնության մեջ կիրառվող մեթոդը կախված է.

1/ Տեղամասերի կողմերի գծերի գուգահեռության և ուղղահայացության պայմանների պահանջից:

2/ Նախագծման մեթոդից, որի ընթացքում անհրաժեշտություն է առաջանում կատարել գծերի և անկյունների հաշվարկներ:

3/ Տեղանքի իրասդրության պայմաններից՝ հսկը է, ուղիւնքը մեղք է, բայց է տարածքը, ծածկված է և այլն:

4/ Նախագծված գծերի սեաքից՝ ուղիղ են, բե՛ կոտրատված:

5/ Հատակագծի հանույթի տեսակից, որի վրա կատարվում են նշանարման նախագիծը՝ թեղողիտային հանույթ, մեզույթին հանույթ, թե աերոֆոտոհանույթ:

Եվներվ վերը հիշատակված պայմաններից բնության մեջ նախագիծը տեղադրվում է ամեն մի հողօգտագործողի համար առանձնակի մերույներով:

1. Նախագծի տեղափոխումը բնության մեջ չափվող սարքերով

Այս եղանակը որպես հեշտ և պարզ մեթոդ միշտ նախընտրելի է հատկապես այն դեպքերի համար, երբ:

ա/ տեղանքը բաց է, նախագծված գծերը մատչելի է տեղադրելու համար, և կառուցապատ չէ, կամ ծառերով ու թփերով չի վակված, ուղիւնքը պարզ է, հարթ և այլն

բ/ նախագծված գծերը հենված են հայտնի գեոդեզիական կամ հանույթային կետերի վրա, այդ կետերը նշված են նախագծի վրա և բնության մեջ գոյություն ունեն: Թեպետ դրանք լինեն հենայուներ, ցցակայտեր, անկյան գագաթներ և իրադրության ցայտուն երևացող շրջադարձի անկյուններ:

2. Նախագծի տեղափոխումը բնության մեջ թեոդոլիտով և չափվող սարքերով

Նախագծի տեղափոխումը բնության մեջ թեոդոլիտով և չափվող սարքերով կարելի է, երբ:

ա/ Տեղանքի պայմաններն այնքան ել բարենպաստ չեն, այսինքն՝ ծառապատված կամ թփատած է, կառուցապատված է և ծածկված տարածք է:

բ/ Նախագծված գծերն իրենցից ներկայացնում են կոտրտված և շատ անկյուններ պարունակող ընթացքներ և պահանջ է զգացվում անկյունների կառուցման ու գների տեղադրման համար:

գ/ Իրադրության կետերի դիրքն այնպիսին է, որ հուսալի հենարման չեն կարող լինել նախագծի տեղադրման համար և հարկավոր է կետերի դրությունը որոշել կառուցվող տնկյունների ու չափվող գծերի միջոցով:

3. Նախագծի տեղադրումը բնության մեջ մենգուլայով

Նախագծի տեղադրումը բնության մեջ մենգուլայով կատարվում է, եթե եղանակը նպաստավոր է և նախագիծը կազմված է մենգուլային հանույթի վրա, կամ աերոֆոտոհանույթի վրա, չոր հիմքով /կարտոն, ֆաներ, ալյումին/:

ա/ Եթե նախագիծը կատարվել է պլանիմետրով և միաժամանակ գրաֆիկ հաշվարկներով:

բ/ Չի պահանջվում խիստ ուղղահայցություններ և զուգահեռություններ նախագծված դաշտերի կողմերի միջև /օրինակ խոտարքերի, արոտների և այլն/:

գ/ Իրադրության կետերը չեն կարող ծառայել հուսալի հենարման կետեր նախագծի բնության մեջ տեղադրելու համար և առաջանում է անհրաժեշտություն՝ կետերի դրության որոշման համար:

դ/ Բացակայում է հողօգտագործման սահմանները և դրանց ներսում բացակայում է թեոլոգիտային ընթացքները, եռանկյունաչափական ցանցը շատ հազվագյուտ է և թեոլոգիայի կիրառումն արդյունավետ չէ:


35. ՆԱԽԱԳԻԾԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՏԵՂԱՊՐԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Հողաշխնարարական նախագծերը կատարվում են այն հատակագծերի վրա, որոնք պատկանում են տվյալ տեղավայրի պրոեկցիայի պատկերը՝ վորքացրած համապատասխան մաշտարով: Այդ հաակագծերի համար հանույթը կատարելիս, որպես հիմք են հանդիսացել գեոդեզիական և հանույթային հիմքերի

կետերը, իսկ բնության մեջ եղած իրադրության կետերը չափազրվել և կապակցվել են այդ կետերի հետ, որից հետո տեղադրվել են հանույթի վրա: Այսինքն թղթի կամ հանույթի վրա արտահայտված բոլոր իրադրությունները նույնությամբ հանույթային հիմքի կետերի հետ միասին գոյություն ունեն նաև տեղավայրում: Նախագծնան ժամանակ առաջացած նոր տեղամասերի սահմանագծերը, նոր ճանապարհները, նոր ռռոգման ցանցը և այլն նախագծողի մտքի արդյունքն է, որոնք նախագծի վրա կան, բայց բնության մեջ չկան: Նշահարման գծագրի կազման ժամանակ հիմնականում խնդիր է առաջանում տեղանքում գտնվող հիմնային կետերի և նոր նախագծված կետերի միջև կապման խնդիր լուծումը, կապման տարրերի ճիշտ մեծությունների որոշումը և գրանցումը նշահարման գծագրերի վրա, որից հետո կատարել տեղափոխումը բնության մեջ: Այդ նպատակով կազմվում է նշահարման գծագիր, որտեղ խոչոր մասշտաբով կամ սխեմատիկորեն կազմվում է գոյություն ունեցող կետերի ու նախագծվող կետերի միջև եղած կապվածության տարրերը: Նախագիծը նախօրոք ենթարկվում ենք ակնարկային հետազոտման: Ընտրում ենք կապման համար այնպիսի հիմքի կետեր, որոնք ունենան համեմատաբար քարձր ճշտություն և տեղանքում օգտվելու համար հարմար դիրքավորում:

Օրինակ՝ ընտրվում է A և B հայտնի գեղեցիական 1 կամ 2 կարգի պոլիգոնումնետրիայի կետերը, կամ դրանց համարժեք ճշտություն ունեցող կետեր: Կարող է լինել նաև հանույթային հիմքի բնոդրվածային ընթացքի կետեր և այն համար թիվ 40 գծագիրը:

Ճշտության բարձրացման նպատակով ցանկալի է, որ AB գծի երկարությունը կամ քազիսը, որի վրա հենվում են կապման խնդիր լուծման համար՝ լինի 3 անգամ ավելի մեծ, քան դրա վրա հենվող նախագծվող գծերը /§19/: Բացի դրանից A և B կետերին մոտ լինեն նախագծվող կետերը, որինակ՝ 1 և 2 նախագծված կետերի հեռավորությունները լինի չափող սարքի՝ ժապավենի, ուղետկայի չափով՝ 20, 50, 100 մետրից ոչ ավելի:



Օգտվելով աղյուսակ 17-ում եղած A և B կետերի կոորդինատներից այն արտագրում ենք թ. 18, 19 աղյուսակների մեջ, համապատասխան տեղերում: N1 և N2 կետերի կոորդինատները վերցնում են գրաֆիկորեն խոչոր մասշտաբի նախագծից: Լուծում ենք հակադարձ գեղեցիական խնդիրներ, նախ՝ 1 և 2 կետերի, ապա՝ A-1, B-2 գծերի համար: Որոշում ենք այդ գծերի ոռոմերը, որից հետո՝ դիրեկցիոն անկյունները, ապա և՝ $\beta_1, \beta_2, \beta_3, \beta_4$ անկյունները ու (d) գծերի ալրոեկցիայի երկարությունները, որոնք գրվում են նաև նշահարման գծագրի վրա: Ակներև է, որ 1-2 նախագծված գիծը, որը տեղամասերի արտաքին սահմանագիծ է, հավասար է $d_{1-2} = 7 \cdot a + \ell = 7 \cdot 50 + 20 = 370$ մետրի, որտեղ՝ $a=50$ մետրի, դաշտերի լայնություններն են, ℓ մետրի միջդաշտային ճանապարհի լայնությունն է:

Այստեղ, քանի որ $d_{1-2}=370$ նախագծված դաշտերի լայնությունների և դաշտային ճանապարհի լայնության գումարն է, ուստի հաստատում թիվ է, որը նշահարման ժամանակ պետք է պահպանվի նույնությամբ:

Ելակետույին կետերի և նախագծված N1 և N2 կետերի միջև կապման խնդրի հաշվարկների համար բերվում են այդ կետերի կոորդինատները թիվ 17 աղյուսակում:

Աղյուսակ 17

Կետերի անվանումները	Կոորդինատները		Ծանրություն
	x	y	
Սահմանակետ N1	+200,00	+400,00	Կոորդինատները որոշված են գրաֆիկորեն 1:2000 մասշտարի հատակագիծ
Սահմանակետ N2	-37,91	+683,42	
A գեղեցիական I կարգի պոլիգոնմետրիայի կետ	+200,706	+408,973	Կոորդինատները վերցված են պոլիգ լնիացքի հավասա- րակշռված ամփոփագրից: Հստ ամփոփագրի՝ $T_{AB}=127^{\circ}40'$
B-...-..-2 կարգի կետ	-29,36	+706,92	

A-1, B-2 գծերի համար ոռմբերի, դիրեկցիոն անկյունների և (d) պյունկցիաների հաշվարկը կատարվում են թ. 18, 19 աղյուսակների ձևով, որոնց մեծությունների որոշումը կատարվում է թիւական եռանկյունաչափական ֆունկցիաներից օգտվելով և կիրառելով հետևյալ բանաձևերը.

$$tgr = \frac{Y_n - Y_{n-1}}{X_n - X_{n-1}};$$

$$d = \frac{Y_n - Y_{n-1}}{\sin \alpha} = \frac{X_n - X_{n-1}}{\cos \alpha}$$

Գտնենք 1-2 սահմանագծի դիրեկցիոն անկյունը և հեռավորությունը.

$$tgr = \frac{Y_2 - Y_1}{X_2 - X_1} = \frac{+683,42 - 400,00}{-37,91 - 200,00} = \frac{+283,42}{-237,91} = \frac{+\Delta y}{-\Delta x}$$

$$(gr)_{1-2} = 1,1915, \text{ որտեղից } r = 108,56^{\circ}00'$$

$$T_{1-2} = (80^{\circ}00' - 50^{\circ}00') = 30^{\circ}00'$$

$$d_{1-2} = \Delta y \cdot \cos \alpha er = 283,42 \cdot 1,305 = 369,86$$

$$d_{1-2} = \Delta x \cdot \sin \alpha er = 237,91 \cdot 1,556 = 370,18$$

$$D_{1-2} \text{միջ} = 370,02 \text{ մ}$$

Ստացված տարրերությունը $r=0,02$ մետր՝ համեմատած զօֆ երկարության հետ շատ չնշին մեծություն է, ուստի այն անտեսվում է և 370,0 մետրը բնության մեջ տեղադրվում է որպես նախագծվող գիծ՝ իր մանրամասն հատվածներով:

A-1 կետերի միջև որոշվող r, T, d-ի մեծությունները տևա ստորև բերված թիվ 18 աղյուսակում:

Աղյուսակ 19

№	Խաչվարկման հաջորդականորյան	Բանաձեռք և նշանակումներ	Բանաձեռք և ճշտմանութերը	Վիճակը
		նացորդականորյան		
1	1	Y_A	Y_B	70°32'
2	3	Y_1	Y_2	-83,420
3	5	$Y_A - Y_1 = \Delta Y$	$Y_B - Y_2 = \Delta Y$	+23,50
4	10	$\cos ecr = \frac{1}{\sin r}$	$\cos ecr$	1.064
5	12	$d_{A-1} = (Y_A - Y_1) \cos ecr = \frac{\Delta Y}{\sin r}$	$d = (Y_B - Y_2) \cos ecr = \frac{\Delta Y}{\sin r}$	25,00
6	2	X_A	X_B	-29,36
7	4	X_1	X_2	-37,91
8	6	$X_A - X_1 = \Delta X$	$X_B - X_2 = \Delta X$	+8,55
9	11	$\sec r = \frac{1}{\cos r}$	$\sec r$	2,924
10	13	$d_{A-1} = (X_A - X_1) \sec r = \frac{\Delta X}{\cos r}$	$d = (X_B - X_2) \sec r = \frac{\Delta X}{\cos r}$	25,00
11	7	$tgr = Y_A - Y_1 / X_A - X_1$	$tgr = Y_B - Y_2 / X_B - X_2$	2,7485
12	8	r=CB	r=CB	70°00'
13	9	r=T (Իրարրում)	T=r (Իրարրում)	70°00'
14	14	d միջին	d միջին	25,00

Ստացվեց 2-B գծի r=CB: $70^{\circ}00'$, T=70°00', d=25,00 մ

Ունենալով (1-2), (1-A), (2-B) գծերի (T) դիրեկցիոն անկյունները՝ կհաշվենք $\beta_1, \beta_2, \beta_3, \beta_4$ անկյունները՝

$$\beta_1 = T_{A-1} - T_{A-B} = 265^{\circ}30' - 127^{\circ}40' = 137^{\circ}50' \text{ ստուգում,}$$

$$\beta_2 = T_{B-A} - T_{B-2} = 307^{\circ}40' - 250^{\circ}00' = 57^{\circ}40' \quad \beta_1 + \beta_2 + \beta_3 + \beta_4 = 360^{\circ}$$

$$\beta_3 = T_{1-2} - T_{1-A} = 130^{\circ}00' - 85^{\circ}30' = 44^{\circ}30' \text{ կամ,}$$

$$\beta_4 = T_{2-B} - T_{2-1} = 70^{\circ}00' - 310^{\circ}00' = 120^{\circ}00' \quad \Sigma \beta_{անկ} = 180 \cdot (n-2) = 360^{\circ}$$

$$\left(\sum \beta = 360^{\circ}00' \right) \text{այսինքն } 180 \cdot (n-2) = 180 \cdot 2 = 360^{\circ}00'$$

Աղյուսակ 18

N	Խաչվարկման հաջորդականորյան	Բանաձեռք և նշանակումներ	Տվյալներ
1	1	Y_A	408,973
2	3	Y_1	400,000
3	5	$Y_A - Y_1 = \Delta Y$	+8,973
4	10	$\cos ecr = \frac{1}{\sin r}$	1,003
5	12	$d_{A-1} = (Y_A - Y_1) \cos ecr = \frac{\Delta Y}{\sin r}$	9,00
6	2	X_A	200,706
7	4	X_1	200,000
8	6	$X_A - X_1 = \Delta X$	+0,706
9	11	$\sec r = \frac{1}{\cos r}$	12,745
10	13	$d_{A-1} = (X_A - X_1) \sec r = \frac{\Delta X}{\cos r}$	9,00
11	7	$tgr = Y_A - Y_1 / X_A - X_1$	12,706
12	8	r=CB	CB: 85°30'
13	9	r=T (Իրարրում)	CB: 85°30'
14	14	d միջին	9,00

Ստացվեց 1-A գծի $T_{1-A}=85^{\circ}30'$, d=9,00 մ

B₂ կետերի միջև որոշվել r, T, d-ի մեծությունները բխ 19 աղյուսակում

36. ՆԱԽԱԳԾԻ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Հաշվարկված և ստուգված անկյուններով և գծերի և երկարություններով նախագիծը անդադրվում է բնության մեջ հետևյալ հեռվ՝ թեոդոլիտը կենսորնացվում է։ Ա կետի վրա և հորիզոնական վիճակի բերելուց հետո լիմբը $00^{\circ}00'$ ցուցմունքով կռղմնորոշվում է։ Յ կետի վրա տեղադրված նշաններով, որից հետո լիմբը բողներով ամրացված, ալիդադայի պտուտակի բոլացումով դիտակը պտտվում է այնքան, մինչև կարդանը լիմբի վրա $137^{\circ}50'$ ցուցմունքը, իսկ այդ վիճակում դիտակի ցույց տված ուղղության վրա տեղադրվում է $d_{A-i}=9,00$ մետր։ Գործիքի կողմանացիայի և սիստեմատիկ սխալների նկազեցման նպատակով թեոդոլիտի դիտակը շուրջ է տրվում զենիֆրով և ապա մյուս շրջանով նորից է կառուցվում β անկյունն այս անգամ կարող է պատահել, որ 1 կետը ստացվի մի ինչ որ 1' կետում, ուստի այն շպետք է մեծ լինի $1,5\text{-ից}$, այսինքն՝ գործիքի ճշտության՝ $t=1'$ դեպքում $m_{\beta}=1,5 \cdot 1 = 1,5'$ -ից, որը սովորական հեռավորության դեպքում կկազմի՝

$$\Delta\ell = \frac{S \cdot m\beta}{\rho} = \frac{9 \cdot 1,5'}{3438'} = 0,004 \text{ մ, այն է՝ } \Delta\ell = 4 \text{ մմ:}$$

Ստացված կետում ամրացվում է N1 սահմանայտնը, կամ սկզբից ցցախայտ է խփվում, աշխատանքի ավարտից և տեղադրման հուսափության վստահությունից հետո սահմանայուններով ամրացնելու նպատակով։

Նոյն ձևով թեոդոլիտը կենտրոնացվում է հայտնի B կետի վրա, բերվում է հորիզոնական վիճակի, այնուհետև լիմբի վրա տեղադրելով $=57^{\circ}40'$ ցուցմունքը, այն կռղմնոյտչում ենք A կետի վրա տեղադրված նշաններով և, ամրացնելով լիմբի պտուտակը, բոլացնելով ալիդադայի պտուտակը՝ գործիքը պտտվում է այնքան, մինչև կարդանը $00^{\circ}00'00''$ ցուցմունքը, այսինքն՝ դիտակի ցույց տված ուղղությամբ, որը կինը

